«Եվ կճանաչեք ճշմարտությունը, եւ ճշմարտությունը ձեզ կազատի», Հվհ. 8, 32

Ա, հունիս 2020

Սուրբ Ամենափրկիչ

Սիզավետի «Սուրբ Ամենափրկիչ» հայ կաթողիկէ եկեղեցու հոգեւոր պարբերաթերթը

Այս թերթի ստեղծման նպատակը

Սիրելի՛ սիզավետցիներ, այս թերթն իր բնույթով հոգեւոր-մշակութային է։ Թերթի ստեղծման դրդապատճառը համայնքի բնակչության մեծամասնության անտարբերությունը կամ անբավարար հետաքրքրվածությունն է հոգեւոր կյանքով, եկեղեցական միասնական աղոթքներով եւ քրիստոնեությամբ ընդհանրապես։

Հետեւաբար, թերթի նպատակն է՝ ծառայել ձեր հոգեւոր ներաշխարհի հարստացմանը եւ առավել զարգացմանը։

Ձեզանից շատերի հետ զրուցելով՝ եկել եմ այն եզրակացության, որ այսօր շատերի մոտ հավատքը գոյատեւում է զուտ անհատական, առանձնացված մակարդակում, այսինքն՝ շատերը սովոր են աղոթել հիմնականում տանը՝ «սրբերի անկյունների» առջեւ կամ ժամանակ առ ժամանակ գնում են մոմ վառելու եւ կարճատեւ աղոթքի՝ Սուրբ Ամենափրկիչ եկեղեցի, կամ մատաղ են անում, երբեմն էլ գնում են «ուխտի»՝ ինչ-որ մի սրբավայր։ Աղոթելն, անշու՛շտ, անհրաժեշտ է եւ վկայում է ձեր հավատքի եւ աստվածասիրության մասին, բայց թվարկածս սովորությունները ձեր հավատքը դարձրել են անհատական, մեկուսացված, աղոթք՝ միայն ձեր եւ ձեր ընտանիքների համար եւ միայն ձեր ընտանիքի հետ միասին, միայն մոմ վառելով կամ միայն մատաղ անելով։

Երբեմն եկեղեցի հաճախելը՝ ոչ Սուրբ Պատարագի եւ այլ ընդհանուր աղոթքների ժամերին կամ առանձին աղոթելը, դեռ չի նշանակում աղոթել Աստծուն հաճելի ձեւով, առատ սեր ցուցաբերել Աստծո նկատմամբ եւ Տիրոջ առաջ հոգեւոր պարտականությունները համարել կատարված։ Այդպես դուք ապրում եք մի հոգեւոր կյանք, որը միայն ձե՛ր սեփական պատկերացման համաձայն է եւ ոչ թե՝ Տեր Հիսուս Քրիստոսի եւ Եկեղեցու։ Իսկ մարդը՝ առանց Քրիստոսի եւ Նրա Սուրբ Եկեղեցու առաջնորդության, հեշտությամբ կարող է սխալվել եւ սխալվում է։

Հավատքը սրտումդ ունենալը եւ այն պապերից ժառանգած լինելը դեռ չի նշանակում, որ ամեն ինչ ճիշտ գիտես հավատքի, աղոթքի եւ Աստծո մասին։ Պապերից ստացած հոգեւոր, բարոյական ժառանգությունը, արժեքները, դաստիարակությունը շատ կարեւոր են եւ հիմնարար, բայց պետք է միշտ հիշել, որ մեր պապերը սովորել են ոչ միայն իրենց պապերից, այլեւ եւ նախեւառաջ՝ Տիրոջ Սուրբ Եկեղեցուց եւ իրենց քահանաներից, վարդապետներից։ Եվ, բացի այդ, ձեր պապերը, դեռեւս մինչեւ 1930*-ականների կոմունիստական արգելքը, անխախտ ձեւով կապված են եղել եկեղեցական աղոթքների հետ, քահանաների հետ, Ավետարանի եւ քրիստոնեական ուսմունքի սերտողության հետ, կիրակնօրյա Պատարագի ժամը իրենց համար սուրբ է եղել, Աստծո պատվիրանները, քահանայի խոսքը՝ հարգված եւ ընդունելի, նաեւ կիրառելի՝ ընտանեկան կյանքի մեջ եւ աշխատանքում։*

1938*-*1991*թթ. դուք եւ ձեր հայրերը հնարավորություն չեք ունեցել մասնակցելու Սուրբ Պատարագի եւ միասին, քահանայի առաջնորդությամբ աղոթելու ձեր եկեղեցում, եւ դա կոտրել է ձեր պապենական հին սովորությունը՝ եկեղեցում միասին աղոթելու, Քրիստոսի հետ միանալու Նրա Սուրբ Պատարագի ժամանակ, դուք եւ ձեր հայրերը հնարավորություն չեք ունեցել ճաշակելու Տիրոջ Սուրբ Մարմինն ու Արյունը, ձեր ասած «նշխարը», որը, սակայն, քրիստոնեական կյանքի հիմնաքարն է։*

Որպես հետեւանք, 1991*-ից հետո, երբ եկեղեցին սկսեց գործել եւ հայ կաթողիկէ քահանաները վերսկսեցին ծառայել գյուղում, ձեր պապենական հին սովորությունը արդեն մոռացված էր՝ ընդամենը մոտ վաթսուն տարիների ընթացքում։ Քահանաների նահատակությունը, աքսորը, եկեղեցու փակվելը, անաստվածության պետական քարոզը, փաստորեն, ձեր հիշողության միջից կարողացա՛ն ջնջել ձեր պապերի թանկարժեք սովորությունը, որ հոգեւոր եւ բարոյական արժեքների մի ամբողջություն էր՝ դեռեւս ժառանգված Արեւմտյան Հայաստանից։ Ձեր հավատքը մնաց միայն տներում եւ ձեր անհատական պատկերացումների շրջանակներում,*

դուք կամ ձեզանից շատերը, ըստ էության, մինչ օրս անվերադարձ, կտրվեցիք Տիրոջ հետ միությունից՝ Սուրբ Հաղորդությունից՝ «նշխար»-ը ճաշակելուց, որը հաստատել է Ինքը՝ Տերը եւ ոչ թե քահանաները։

Սա՛ է չարի հաղթանակը, որ գործում է միշտ ծպտված եւ աննկատելի։

Բայց կա նաեւ հուսադրող եւ ուրախացնող մի փաստ. Սուրբ Հոգու լուռ ներգործության, շատերի հոգեւոր առավել բարձր գիտակցության եւ հոգեւորականների աշխատանքի շնորհիվ այսօր կա հավատացյալների մի ոչ մեծ խումբ՝ տարբեր տարիքի, ովքեր կանոնավոր կերպով գրեթե միշտ ներկա են միասնական աղոթքներին։

Փա՛ռք Աստծուն, որ փոխում է մարդկանց սրտերը աննկատ կերպով։

Բայց այդ խումբը շատ փոքր է՝ համեմատած գյուղի բնակչության թվի հետ։ Եվ սա բնա՛վ պատիվ չի բերում Սիզավետի նման ավանդապահ մի գյուղի։

Ձեր գյուղի հոգեւոր պատմության, Սուրբ Պատարագի եւ Սուրբ Հաղորդության մասին կարող եք այս թերթում ծանոթանալ առանձին հոդվածներով, բայց, խնդրում եմ՝ ձեր՝ սոցիալական խնդիրներով եւ գյուղատնտեսական անվերջանալի աշխատանքներով գերզբաղված առօրյայում անպայմանորեն ժամանակ հատկացրե՛ք՝ ընթերցելու այս թերթը եւ մտածելու դրանց մեջ գրված պատմությունների, վերլուծված իրողությունների, մարտահրավերների, հոգեւոր ուսուցումների մասին, որոնք, հուսամ, ձեզ կօգնեն ավելի զգոն եւ սթափ ձեւով մոտենալու ձեր եւ ձեր զավակների հոգեւոր նկարագրին եւ աճմանը։

Այսօր մենք բոլորս կարիքն ունենք՝ վերանայելու Աստծո հետ մեր հարաբերությունները, ուղղելու մեր սխալները, լրացնելու մեր բացերը, որովհետեւ, ի վերջո, մարդս ինչքան էլ ձգտի ապրել ինքնուրույն, չի՛ կարող հաջողվել՝ առանց Աստծո օրհնությունների եւ առաջնորդության։ Աստծուց հեռու՝ միայն իր առօրյա նյութական խնդիրներով ապրող մարդը, առանց գիտակցելու, հեշտությամբ կարող է ընկնել չարի գերության մեջ եւ զրկվել Աստծո օրհնություններից, իր հոգու փրկությունից՝ առհավետ...

Քանի դեռ ուշ չէ, նայեցե՛ք ինքներդ ձեզ եւ ձեր հայացքն ուղղե՛ք դեպի Տերը, որ մեր միակ ճանապարհն է դեպի երջանկություն՝ այս կյանքում եւ Աստծո Արքայության մեջ.

«Ես եմ ճանապարհը, ճշմարտությունը եւ կյանքը», Հվհ. 14, 6։

Տ. Հովսեփ Քհն. Գալստյան՝
Մեծ Սեպասար, Ղազանչի, Բավրա եւ Սիզավետ գյուղերի հոգեւոր հովիվ,
Հուլիս, 2020

Սիզավետի հոգեւոր պատմությունը

«Պահի՛ր բարի ավանդը՝ Սուրբ Հոգու օգնությամբ, որ բնակվում է մեր մեջ» (Բ Տիմ. 1, 14):

Սիզավետի վերաբերյալ ամբողջական պատմական տեղեկություններ այսօր գտնելը բավական դժվար է, բանավոր պատմությունների առավել հավաստի կենդանի կրողները եւս արդեն քիչ են։ Որպեսզի ինչ որ պատկերացում կազմենք գյուղի հոգեւոր պատմության մասին, ինչը որ այս թերթի համար առավել կարեւոր է, հարկավոր է մեծ համբերությամբ հավաքել բոլոր տեղեկությունները, լսել շատերի պատմությունները, ընթերցել ժամանակի պատմական անցքերի վերաբերյալ նկարագրություններ, առանձին անհատների հուշեր։ Հետեւաբար, ինչ որ փաստերի կամ թվերի մեջ, գուցե, որոշակի անճշտություններ լինեն, որի համար հայցում եմ ձեր ներողամտությունը։

Այստեղ ջանացել եմ ավելի կենտրոնանալ հոգեւոր նկարագրի վրա, որպեսզի հասկանանք, թե ինչպիսի հոգեւոր ժառանգություն, ինչպիսի դեռ չբացահայտված հոգեւոր ներուժ ունի գյուղը, եւ թե արդյոք կարող է գյուղը լինել ավելին՝ հոգեւորի մեջ, քան ինչ որ է՝ մեր օրերում։

Գաղթը

Ինչպես տարածաշրջանի հայ կաթողիկէ շատ այլ գյուղերը, Սիզավետ կամ հին անունով Քոռաղբյուր գյուղը եւս հիմնվել է Արեւմտյան Հայաստանից դեպի Շիրակ գաղթած հայ կաթողիկէ ընտանիքների կողմից, որոնք գաղթել են նախ 1829-30թթ. Մեծ Գաղթի օրերին, ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո, երբ Արեւմտյան Հայաստանի տարածքները մնացին Թուրքիայի տիրապետության տակ, իսկ Արեւելյան Հայաստանը՝ Ռուսաստանի։ Մոտ 70.000 հայ այդ գաղթի ժամանակ, թողեց իրենց պապենական հողերը, տները եւ ռուսական զորքերի հետ միասին անցավ Ջավախք եւ Արեւելյան Հայաստան, տեղավորվեց հիմնականում Շիրակում, Լոռիում եւ Գավառում։ Հայ կաթողիկէ ընտանիքները հաստատվեցին Ջավախքում, Լոռիում եւ Շիրակի գյուղերում։ Սիզավետ գյուղը հիմնող գաղթական ընտանիքները այդ գյուղի տարածքում հաստատվել են տարբեր թվականներին եւ Արեւմտյան Հայաստանի տարբեր բնակավայրերից։ Օրինակներ. Պողոսյանների տոհմի պապերը եկել են Արդահանի գավառի Վել գյուղից, որտեղից նախ անցել են Ջավախք, հաստատվել Ախալքալակի Տուրցխ եւ հարեւան այլ գյուղերում, ապա՝ անցել Լոռի եւ Շիրակ, հաստատվել մի մասը՝ Շահնազար գյուղում, ապա մյուս մասն եկել է Քոռաղբյուրի տարածք։ Լոռվա Շահնազարում են հաստատվել եւ ապա Քոռաղբյուրում՝ նաեւ Հլոյանները, Մշեցյանները (վերջիններիս մի թեւը հետագայում եւս դարձավ Պողոսյան)։ Բեռնեցյանները գաղթել են Կարսի Բեռնի կաթողիկէ գյուղից։ Տերանց տոհմը գաղթել է Խնուս գավառի Քյուլլի գյուղից, հաստատվել Ջավախքի Հեշտիա գյուղում, ապա՝ Քոռաղբյուրում։

Տոհմերը շատ են եւ այստեղ չեմ հիշատակում բոլոր տոհմերի անունները, որովհետեւ այս հոդվածի համար դա չէ կարեւորը, այլ՝ այն, որ բոլոր ընտանիքների ճնշող մեծամասնությունը գաղթել է կաթողիկէ համայնքներից. հայ կաթողիկէ դավանանքը եղել է նրանց միավորող կարեւոր գործոն։ Կաթողիկէ դավանանքը նաեւ նրանց օգնել է պահպանել ոչ միայն հավատքը եւ միությունը Տիրոջ Ընդհանրական Սուրբ Եկեղեցու հետ, այլեւ՝ իրենց տոհմային ավանդությունները եւ հայ ազգային դիմագիծը։ Կաթողիկէ դավանանքը անխախտ պահելը քոռաղբյուրցիների համար ոչ միայն հավատքի հարց էր, այլեւ՝ Արեւմտյան Հայաստանում թողած հայրենական ժառանգությունը պահելու, հին ու քաղցր հիշողություններով ապրելու հարց, որը նոր սերունդների մեջ աստիճանաբար թուլացավ, մանավանդ, կոմունիստական հալածանքների տարիներին։ Բայց մինչ օրս էլ կարելի է տարեցներից լսել իրենց ծնողների, պապերի պատմությունները՝ արդեն ոչ շատ մանրամասն եւ աղոտ հիշողությամբ։

Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին

Գյուղի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին կառուցվել է 1857-ին, մի թվական, որը վկայում է այն մասին, եկեղեցի ունենալու պահանջը մեծ է եղել, եւ եկեղեցին բավական շուտ են կառուցել։ Այդ տարիներին ներգաղթը դեռեւս ընթացքի մեջ էր։ Ղեւոնդ Ալիշանի «Շիրակ» աշխատության աշխարհամարի տեղեկություններով, Քոռաղբյուրում 1873թ. ապրում էր 30 հայ կաթողիկէ ընտանիք՝ 234 անձով[1]։ Պետք է մտածել, որ եկեղեցու կառուցման ժամանակ բնակիչների թիվն ավելի քիչ է եղել, բայց գյուղում կառուցել են բավական մեծ եկեղեցի՝ միանավ, հարթ ծածկով ու վերնահարկով։ Սա վկայում է մեծ հավատքի եւ բարեգործության մեծ պատրաստակամության մասին։ Այսօր այլեւս գրեթե անհնարին է իմանալ, թե ինչպես են կազմակերպել եկեղեցու կառուցումը, ով է նախաձեռնել, ով է եղել գյուղի քահանան, ինչ միջոցներով են կառուցել (եթե, իհարկե, մի օր պատմաբաններից մեկը հանձն չառնի ժամանակի պատմական եկեղեցական վավերագրերի հայտնաբերման եւ ուսումնասիրության շնորհընկալ աշխատանքը)։ Կարելի է գրեթե վստահությամբ ասել, որ բնակիչներն իրենց ձեռքով են կառուցել եկեղեցին՝ հավատքի մի վկայություն, որը բնորոշ էր կաթողիկէ բոլոր գյուղերին։

Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին կանոնավոր կերպով գործել է մինչեւ 1930-ականների վերջը, երբ կոմունիստներն արգելեցին հայ կաթողիկէ քահանաների ծառայությունը խորհրդային միության ողջ տարածքում, իսկ եկեղեցին վերածեցին գյուղմթերքի պահեստի։

1990-ականներին, երբ հայ կաթողիկէ քահանաները վերսկսեցին իրենց ծառայությունը գյուղում, Հ. Միքայել Վրդ. Մուրադյանը սկսեց Սուրբ Պատարագ մատուցել նախ գյուղի դպրոցում։

1993թ. Սիզավետ այցելեց եւ գյուղացիներին իրենց հավատքի մեջ ամրանալու, հոգեւոր կյանքն աշխուժացնելու հայրական խոսքով դիմեց նաեւ Տանն Կիլիկիո Կաթողիկէ Հայոց Կաթողիկոս Պատրիարք Հովհաննես Պետրոս 18-րդ Գասպարյանը։

1996թթ. Սուրբ Ամենափրկիչը մաքրեցին եւ հունիսի 8-ից կիսավեր եկեղեցում տեղի ունեցավ առաջին մկրտությունը։

Եկեղեցու այսօրվա տեսքը բոլորովին այլ է, որովհետեւ այսօրվա շինությունը 2002-2005թթ. կատարված վերակառուցման արդյունքն է. հին եկեղեցու պատերը եւ կոմունիստների ժամանակ կառուցված թիթեղյա ծածկը եղել են կիսափուլ վիճակում, մասնագետների կարծիքով ամրացնել այլեւս հնարավոր չի եղել, այդ պատճառով քանդել են հին գեղեցիկ սեւ տուֆով կառուցված պատերի վերին մասը եւ ստորին հատվածի վրա կառուցել նոր շինություն՝ վարդագույն տուֆով։ Քանդված պատերի քարերի մի մասը դրված են եկեղեցու պարիսպների մեջ, շատ քարեր պահպանել են իրենց նախնական տեսքը, քարերից մեկը՝ խաչի պատկերով դրված է եկեղեցու մուտքի վերեւում, զանգակատան պատի մեջ։ Կառուցել են նաեւ փոքրիկ զանգակատուն։ Վերակառուցված եկեղեցին հանդիսավոր արարողությամբ օծվեց 2005թ.՝ ձեռամբ Արհ. Տ. Նշան Արքեպս. Գարաքեհեյանի։ Գյուղում այդ ժամանակ ծառայում էր Արժ. Տ. Գրիգոր Քհն. Մկրտչյանը՝ ծնունդով հարեւան Մեծ Սեպասար գյուղից։ 2001-2008թթ. նա կանոնավոր հիմքերի վրա դրեց Սուրբ Պատարագի եւ այլ եկեղեցական խորհուրդների մատուցումը եկեղեցում։ Կանոնավոր աղոթական կյանքը շարունակեցին նրան հաջորդող քահանաները՝ Տ. Նարեկ Քհն. Թադեւոսյանը՝ 2008-2013թթ., Հ. Պետրոս Վրդ. Եսայանը՝ 2013թ., Հ. Գառնիկ Վրդ. Հովսեփյանը՝ 2013-2015թթ., Հ. Ռաֆայել Վրդ. Կրավչիկը, ապա՝ 2016թ. սկսած՝ ես՝ ձեր խոնարհ ծառան։

2018թ. վերջին Հայկական Կարիտասի օգնությամբ, «Ծխական հասարակական խորհուրդներ» ծրագրով գյուղացիների, հատկապես, Արարատ Պողոսյանի, Հենրիկ Պողոսյանի

[1] Հ. Ղեւոնդ Ալիշան, «Շիրակ. Բ Արեւելեան Շիրակ», Սուրբ Ղազար, 1881թ. էջ 144

կամավոր աշխատանքով կառուցեցինք եկեղեցու բակի դարբասը, նորոգեցինք պարիսպները, ծնունդով Սիզավետից քարտաշ վարպետ Արամի ամբողջովին կամավոր եւ ձրի աշխատանքով եւ գյուղացիների դրամական աջակցությամբ կառուցեցինք քարե Սուրբ Սեղանը։ Սեղանի միջնամասում տեղադրեցինք նաեւ Տիրոջ Խաչափայտի սուրբ մասունք, որը նվիրեց Արհ. Տ. Ռաֆայել Արքեպս. Մինասյանը եւ իր ձեռքով օծեց Սուրբ Սեղանը՝ 2019*-ին։*

Թուրքերի ջարդերը եւ սրբապղծությունը

Քառաղբյուրը Ալեքսանդրապոլի գավառի շատ այլ գյուղերի նման ենթարկվել է թե երիտթուրքական կառավարության 1918*թ. զորքերի վեցամսյա օկուպացիային եւ թե, հատկապես,* 1920*թ. դեկտեմբեր եւ հունվար ամիսների թալանին, սպանություններին, սոցիալական դժվարությունների, ֆիզիկական եւ այլատեսակ բռնությունների։ Իրենց հայրենի երկրից արտաքսվելուց ինը տասնամյակ անց սիզավետցիները դարձյալ վերապրեցին թուրքական գազանությունների հետեւանքները՝ նոր նահատակներով հանդերձ։ Հայաստանի Ազգային արխիվի տեղեկությունները փաստում են հետեւյալը.* «Թուրքական բանակում «այլասերումը մեծ չափեր» էր ընդունել: Թուրքերն ամենուր իրենց պահում էին անասելիորեն սանձարձակ: Ժամանակակիցը վկայում է, որ Խոտայ Խարաբա (Բավրա), Դարակեյ (Սարագյուղ), Կոր-Աղբյուր (Սիզավետ), Կոյակուլի-Ղազանչի եւ Շիշթափա (Սեպասար) հայկական գյուղերում կանայք եւ աղջիկները ենթարկվել են բռնարարքների, նրանց մի մասին առեւանգել են տաճիկները, իսկ մի մասին էլ՝ հարեւան Աղաբաբայ գյուղի թուրքերը: Այդ գյուղերում պատկերը շատ ծանր էր. ամեն ինչ կամ ավերված էր, կամ էլ վառված, ամենուր ընկած էին տասնյակ դիակներ, պատահում էին նաեւ կիսամեռ եւ սովահար եղած երեխաներ ու ծերեր[2]»։ *Թուրքերն անխնա թալանում էին ամեն ինչ՝ տան կահույքը, նույնիսկ վառարանները, ի սպառ ունեզրկում բնակիչներին, տանում էին հացահատիկի բերքը, անասունները, «բայրա» կոչված հարկ պահանջում գյուղացիներից, ովքեր հրաժարվում էին կատարել իրենց պահանջները, գաղտնի սպանում էին, հիմնականում գիշերները։*

Պատմում են, որ մի թուրք զինվոր ուզեցել է մտնել Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին, դուռը փակ է եղել, իսկ գյուղացին, որի մոտ եղել է բանալին, հրաժարվել է բացել դռան կողպեքը։ Թուրքը կրակել է եկեղեցու դռան կողպեքի վրա, բացել դուռը, մտել եւ պղծել է եկեղեցին, ջարդել Աստվածամոր արձանիկը, ապա նույն վայրկյանին աստվածային պատիժը վրա է հասել, թուրքը սկսել է դիվահարվել, կծոտել սեփական ձեռքերը եւ դուրս փախել եկեղեցուց։

Այսպիսի հալածանքներ տեսած ժողովուրդը չի կորցրել իր հույսը՝ հիշելով, թե ինչպես են իրենց պապերը Արեւմտյան Հայաստանում քրիստոնեական արիությամբ կրել թուրքական հալածանքների բեռը եւ պահել հավատքի ավանդը՝ ըստ Պողոս առաքյալի խոսքի. «Բարի պատերազմ մղեցի… պահեցի հավատքը», *Բ Տիմ.* 4, 7։

Քահանաներ՝ մինչեւ կոմունիստները

Մինչեւ 1930*-ականների կոմունիստական արգելքն ու աքսորները գյուղում ծառայած հոգեւորականների մասին չեն հիշում՝ բացի միայն մեկից՝ Տ. Միքայել Քոթանջյանից, ով թաղված է գյուղի գերեզմանատանը։ Այսօր Պողոս Քոթանջյանի տանը պահպանված է նաեւ Տ. Միքայելի լուսանկարը՝ թոռնուհու՝ Նվարդի հետ։ Հ. Միքայելը նախ ծառայել է Ջավախքի Թորիա գյուղում, որտեղ նրա ջանքերով նաեւ կառուցվել է տեղի եկեղեցին։ Տ. Միքայելի մասին ստույգ տեղեկությունները շատ չեն, ասում են, որ մահացել է գյուղում՝* 1938*թ.։*

Տիրացու Սերգոն սերում էր մի տոհմից, որին անվանում են «Տերանց», քանի որ դեռեւս իրենց պապերի մեջ եղել են

[2] Հ. Բ. Աբրահամյան, «Ալեքսանդրապոլյան իրադարձությունների շուրջ, 1920թ. նոյեմբեր-1921թ. ապրիլ»

անվանի քահանաներ՝ Տեր Անտոն անունով։ Նրանցից մեկը ծառայել է Խնուս գավառի Քյուլլի գյուղում, իսկ մյուս երկուսը՝ դարձյալ նույն անունով, արդեն գաղթից հետո՝ Ջավախքի Հեշտիա գյուղում։ Քյուլլիում ծառայող Տեր Անտոնի մասին պատմում են, որ երբ թուրքերը 1829թ., հարձակվել են Քյուլլիի վրա, Տեր Անտոնը մինչեւ վերջ մնացել է իր հոգեւոր հոտի կողքին՝ որպես քաջ հովիվ՝ Տիրոջ օրինակով։ Տեր Անտոնը եւ գյուղապետը նախապես գյուղի բնակչության մեծ մասին տարհանել էին, քանի որ Տեր Անտոնի եւ գյուղապետի տղաները սպանել էին իրենց գյուղում գիշերող թուրք փաշաներից մեկին, ով պահանջել էր իր մոտ բերել գյուղի աղջիկներին եւ, հետեւանքները կանխատեսելով, ջանացել են փրկել ժողովրդին։ Երբ թուրքերը մտել են Քյուլլի, գյուղում մնացել էին միայն ծերերն ու կանայք՝ Տեր Անտոնի հետ միասին։ Թուրքերը բոլորին կոտորել են, իսկ Տեր Անտոնին անգիջում եւ հանդուգն կեցվածքի համար կախաղան են բարձրացրել եկեղեցու զանգակատան մեջ։ Տերանց տոհմի մյուս քահանաները կազմակերպել են Հեշտիայում հաստատված քյուլլեցիների համայնքային եւ եկեղեցական կյանքը, բայց հետագայում Շիրակ գաղթող ընտանիքների հետ միասին չեն եկել Քոռաղբյուր, որքան որ տեղյակ են բնակիչները։ Տեր Անտոնի տոհմից է սերում այսօր Հեշտիայում ծառայող մեր քահանան՝ Տեր Անտոն Անտոնյանը։ Քոռաղբյուրում են այսօր բնակվում Տեր Անտոնի տոհմից սերող Մխիթարյանները՝ գյուղի բարեպաշտ հավատացյալ տոհմերից մեկը։ Եւ, իհարկե, չմոռանանք Տիրացու Սերգոյին, որի սերունդները թեեւ այսօր գյուղում չեն, բայց նա էր, որ դստեր հետ միասին կոմունիստական տարիներին պահում էր աղոթական կյանքը գյուղում եւ խաչելության պատկերն՝ իր տան մեջ՝ չվախենալով հետեւանքներից։

Հավատքի ապրումը խորհրդային տարիներին եւ հետո

Սիզավետցիները շատ սիրել ու պաշտել են եկեղեցում դեռեւս մինչեւ 1930-ականները դրված մի մեծ խաչելության պատկեր, որը հրաշագործ զորություն է ունեցել. գյուղի օրհնությունը, իրենց ընտանիքների հաջողությունները կապել են այդ խաչի զորության հետ։ Այդ խաչելությունը, ըստ պատմությունների, եկեղեցուն նվիրել է գյուղի մեծահարուստներից մեկը՝ Հլոյի Մարտիրոսը։ 1930-ականներին կոմունիստ անաստվածներն այդ խաչը դուրս են շպրտել եկեղեցուց եւ արգելել են այն վերցնել։ Գյուղացիների պատմելով՝ մոտ 1 մ. բարձրությամբ այդ խաչը երկար ժամանակ մնացել է հողի տակ՝ լքված. իշխանությունների վախից ոչ ոք չէր համարձակվում խաչին ձեռք տալ։ Բայց 1940-ականներին գյուղացիներից մեկը՝ տիրացու Սերգոն, մի բարեպաշտ հավատացյալ, ընթերցում էր Աստվածաշունչ, աղոթասեր էր, գիշերով իր թոռան հետ միասին հողի տակից հանել է այդ խաչը եւ տարել-դրել է իր տանը, գաղտնի պահել ու մաքրել է։ 1950-ականներին՝ Ստալինի մահից հետո, երբ անաստված իշխանությունները փոքր-ինչ թուլացրեցին հավատքի հալածանքը, գյուղացիները սկսել են հավաքվել Սերգոյի տանը՝ պաշտելու խաչը եւ աղոթելու։ Սերգոն խաչը դրել էր մի առանձին սենյակում, որ մատռան էր վերածվել։ Մարդիկ գալիս էին Տացու Սերգոյի մոտ, խնդրում նրա աղոթքները, հաղորդվում խաչի զորությանը։ Սերգոն եւ նրա աղջիկը՝ Արեգնազը կամ Արեգ Աչեն, նաեւ մկրտություններ են արել՝ Սուրբ Երրորդության անունով, ինչպես աղոթքի բանաձեւը հիշել են իրենց քահանաներից։ Խաչի պատկերը հետագայում Սերգոյի թոռներից մեկը գյուղից տարել է Երեւան եւ դարձրել ընտանեկան սրբություն, առայժմ անվերադարձ...

Խորհրդային տարիներին սիզավետցիները, թեւ քահանա չունեին, բայց տիրացու Սերգոյի եւ այլ աղոթասեր գյուղացիների օգնությամբ, իրենց պապերից եւ տատիկներից լսած աղոթքներով պահել են իրենց հավատքը, հայ կաթողիկէի նկարագիրը։ Այդ աղոթքներից շատերն այսօրվա տարեցների, նաեւ միջին սերնդի ներկայացուցիչների շուրթերին են՝ միախառնված իրենց մանկական հիշողություններին եւ գյուղի խոսվածքին։ Կարելի է նրանցից լսել հին աղոթքներ, որոնք այժմ շատ քչերն են գործածում եւ կարելի է գտնել միայն հին աղոթագրքերում։ Սիզավետցիները հիացմունքով են հիշում իրենց մեծերի աղոթասիրությունը, թե ինչպես էին տասնամյակներ շարունակ առավոտ-իրիկուն աղոթում սահմանված թվով «Հայր մեր» եւ «Ողջոյն քեզ, Մարիամ», ընթերցում Նարեկ եւ Ավետարան, աղոթում հիվանդների համար, մատաղ անում, ընտանիքներով գնում ուխտի հին վանքերը։

Ներկայիս հոգեւոր մարտահրավերները՝ ուղղակի խոսքով

Սիրելի՛ սիզավետցիներ, այս համառոտ պատմությունը ձեր գյուղի հոգեւոր նկարագրի մասին գրի առա այս թերթի մեջ՝ ձեզ, մանավանդ, երիտասարդ սերնդին ծանոթացնելու կամ հիշեցնելու ձե՛ր իսկ հոգեւոր պատմությունը, հոգեւոր արմատները, հոգեւոր ինքնությունը, որ հիմված է Տեր Հիսուս Քրիստոսի Սուրբ Կաթողիկէ՝ Ընդհանրական, Եկեղեցու մեջ, որի մի մասն է Հայ Կաթողիկէ Եկեղեցին՝ ձեր Մայր Եկեղեցին, ձեր

հոգեւոր եւ հայ ազգային նկարագրի անբաժանելի եւ կարեւորագույն մասը։ Խնդրանքս է, որ ջանաք առավել հետաքրքրվել ձեր դյուղի, ձեր տոհմերի, հայ ժողովրդի եւ Հայ Կաթողիկէ Եկեղեցու պատմությամբ՝ հարցնելով ձեր մեծերին, ծնողներին, ընթերցելով գրականություն՝ պատմական եւ հոգեւոր, ընթերցելով Աստվածաշունչ եւ, իհարկե, հաճախելով եկեղեցի, զրուցելով հոգեւորականների հետ։ Ես սիրով կսպասեմ ձեզանից յուրաքանչյուրին՝ զրուցելու եւ ծառայելու ձեր հոգեւոր աճմանը։

Այդ պատմություններից դուք կիմանաք, թե ով եք դուք, որտեղից եք գալիս, ինչպիսի հոգեւոր, բարոյական նկարագիր են ունեցել ձեր պապերը, ո՞րն է ձեր Եկեղեցին, ի վերջո, ի՞նչ է Կաթողիկէ Եկեղեցին, ի՞նչ է նշանակում լինել հայ կաթողիկէ եւ, ամենակարեւոր կետը, ուր պիտի հասնեք, թե ինչ է ասում մեր Տեր Հիսուս Քրիստոսը՝ ձեզանից յուրաքանչյուրին այսօր՝ որպես հայ կաթողիկէների եւ որպես ձեր երկրի քաղաքացիների։

Մեծ անտարբերություն կա ձեր համայնքում, ինչպես եւ շատ այլ համայնքներում՝ դեպի սեփական հոգեւոր ինքնությունը, դեպի Եկեղեցին, դեպի միասնական աղոթքը եւ, ի վերջո, դեպի Աստծո հրավերը՝ ճանաչելու եւ սիրելու Իրեն։ Այս անտարբերությունը կործանարար է, *հավատացե՛ք, կործանարար է՝ ձեր անհատականությունների համար, ձեր ընտանիքների համար, եւ, անշուշտ, ձեր համայնքի համար, որ սերում է հոգեւոր եւ ընտանեկան ավանդական արժեքներից, որ շատ դառնություններ, նահատակություններ է տեսել, կիսել Տիրոջ չարչարանքների ճանապարհը։*

Ուզում եմ հատուկ շեշտել հետեւյալը.

հոգեւորի հանդեպ անտարբերությունը նշանակում է ի զուր դարձնել ձեր նախնիների կրած չարչարանքները եւ դրանց հոգեւոր, բարոյական իմաստը, նշանակում է մոռացության մատնել այն ամենը, ինչ նրանք արել են՝ ձեզ ավանդելու համար լավագույն ընտանեկան, տոհմական, հոգեւոր եւ բարոյական արժեքներ։

Սոցիալական խնդիրները, հանապազորյա հացի մասին մտահոգությունները եղել են միշտ, առավելեւս՝ նախկինում՝ 1929-31*թթ. Մեծ Գաղթի տարիներին, նոր պայմաններին համարվելու տասնամյակներին,* 1918-21*թթ. թուրքական հալածանքների ժամանակ,* 1930-*ականների կուլակաթափության տարիներին,* 1990-*ականների սկզբներին, նաեւ այսօր։ Բայց ձեր պապերը իրենց սոցիալական մեծ բեռների հետ միաժամանակ կարողանում էին միշտ ժամանակ գտնել՝ նաեւ Տիրոջ հանդեպ իրենց ջերմեռանդ սերը ապրելու, Տիրոջ օրը՝ կիրակին, սուրբ պահելու, եկեղեցում միասնաբար աղոթելու համար։*

Ձեզանից շատերը մեծ հպարտությամբ պատմում են իրենց տատիկներից ու պապերից սովորած աղոթքների մասին, ասում են այդ աղոթքները, նույնիսկ այնպիսիք, որոնք այսօր այլեւս մոռացված են, բայց դուք հիշում եք։ Հիշում եք, *որովհետեւ այդպես եք դաստիարակվել, որովհետեւ փոքրուց ձեր մեջ սերմանել են սեր՝ աղոթքի նկատմամբ, սեր՝ Եկեղեցու նկատմամբ։ Դա՛ է պատճառը, որ ձեր պապերն ապրել են հողաշեն տներում, հավաքվել օդաններում, բայց կառուցել են քարե գեղեցիկ եկեղեցի։ Այդ հուշերը ձեր մեջ պետք է արթնացնեն հոգեւոր պատվախնդրություն՝ համախմբվելու Տիրոջ Սուրբ Սեղանի շուրջ՝ Սուրբ Պատարագին եւ ճաշակելու Տիրոջ Մարմինն ու Արյունը, որ դուք «նչխար» եք ասում։ Ձեր եկեղեցին ձեզ պետք է հիշեցնի, որ դուք էլ՝ ձեր հերթին, ձեր պապերի եւ մեծ մայրերի նման, պարտավո՛ր եք ձեր կյանքի օրինակով, ձեր աղոթքներով, ձեր հոգեւոր բարձր նկարագրով օրինակ լինել ձե՛ր զավակների համար եւ նրանց սնուցել հոգեւոր արժեքներով, ձեր զավակներին, որ օրըստօրե ավելի ու ավելի են հեռանում իրենց հոգեւոր արմատներից, որովհետեւ չեն տեսնում ձե՛ր կենդանի օրինակը, իսկ պապերն ու մեծ մայրերն արդեն քիչ են մնացել։*

Հետեւաբար, սիրելինե՛ր, հանուն Տիրոջ եւ ձեր հոգեւոր անցյալի, ավելի սթա՛փ ձեւով անդրադարձեք ձեր նեկայիս հոգեւոր նկարագրին եւ սկսե՛ք նոր՝ առավել աստվածահաճո մի ընթացք։

Ուզում եմ այս գրությունս ավարտել Սուրբ Պողոս առաքյալի՝ իր սիրելի հոգեզավակ Տիմոթեոսին ուղղված բառերով.

«Մտաբերում եմ այն անկեղծ հավատը, որ քո մեջ է, որ նախապես կար քո տատի՝ Լավոդիայի, եւ քո մոր՝ Եվնիկեի մեջ. համոզված եմ, որ կա նաեւ քո մեջ», *Բ Տիմ.* 1, 5։

Այս գրությունը պատրաստելիս ինձ աջակցելու համար շնորհակալություն եմ հայտնում սիզավետցիներ՝ Կարինե Հակոբյանին, Վարդան Պողոսյանին, Պետրոս Բեռնեցյանին, Անիչկա Բեռնեցյանին, Տ. Գրիգոր Ավ. Քհն. Մկրտչյանին։

Տ. Հովսեփ Քհն. Գալստյան՝
Սիզավետի հոգեւոր հովիվ,
հուլիս, 2020*թ.*

ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ՈՒՍՄՈՒՆՔԻ ԷՋԵՐ՝ ՄԱՏՋԵԼԻ ԼԵԶՎՈՎ

Ինչու՞ է կարեւոր՝ եկեղեցում ժողովրդի հետ միասին աղոթելը եւ Սուրբ Պատարագին մասնակցելը

Այս թերթի ստեղծման նպատակի մասին վերեւում գրելիս՝ անդրադարձա մի շատ կարեւոր փաստի, որ այսօր համատարած է. այն է՝ հավատքը միայն անհատական պատկերացումների մեջ սահմանափակելու երեւույթը, երբ մարդիկ կարեւորություն չեն տալիս բոլորի հետ միասին եկեղեցում աղոթելուն եւ կիրակնօրյա Սուրբ Պատարագին մասնակցելուն։ Սա, ինչպես գրեցինք, անաստվածության պետական քարոզչության տարիների եւ մեր օրերում հոգեւորի հանդեպ ընդհանուր եւ անտարբերության կամ անբավարար հետաքրքրվածության հետեւանք է։ Այսօր Աստվածաշունչը, Եկեղեցին, հոգեւոր աճը կարեւոր տեղ չունեն մեզանից շատերի առօրյայում, որը հագեցած է սոցիալական հարցերով, գյուղատնտեսական ծանր աշխատանքով, ընտանեկան խնդիրներով։

Աստծո առաջ պարտականություններ ունենալու գաղափարն այսօր ի սպառ բացակայում է համայնքի մեծամասնության պատկերացումներից. մարդկանց թվում է, թե Աստված ամեն ինչ ներում է եւ կների։

Ցավոք, հոգեւորը, սիրո գործերը հիմնականում տեղ չունեն նաեւ երիտասարդների նպատակների եւ երազանքների մեջ։

Հոգեւորը մղված է երկրորդ պլան եւ մեկուսացած, մոռացված է տների սրբապատկերների անկյուններում, պատերի վրա, որտեղ տարիներով փոշոտվում են չօգտագործված աստվածաշնչերն ու վարդարանների համրիչները։ Մարդիկ չեն ուզում ժամանակ տրամադրել այդ ամենին, նույնիսկ՝ մեկ ժամ՝ ամբողջ շաբաթվա մեջ։

Բայց սա մեղք է Աստծո հանդեպ. սա նշանակում է՝ Աստծուն արժանի տեղ չհատկացնել մեր կյանքում։

Մեզ, գուցե, թվում է՝ եթե մենք հավատում ենք, որ Աստված գոյություն ունի, ապա այդքանը բավարար է, եւ իրավունք ունենք խնդրելու կամ պահանջելու, որ Աստված իր առատ օրհնությունները բաշխի մեզ, իսկ երբ չենք վայելում այդ օրհնությունները, մեր աղոթքները պատասխանի չեն արժանանում, մտածում ենք, որ անօգուտ է Աստծուն աղոթելը, միեւնույնն է՝ չի լսի, կամ, միեւնույնն է՝ Աստծո կամքն անհայտ է մեզ։ Հետեւանքը լինում է այն, որ շատերն աստիճանաբար մոռանում են նաեւ իրենց անհատական աղոթքները կատարել կամ անում են միայն շատ ընկճված, վախեցած ժամանակ, կամ էլ նեղանում են Աստծուց եւ հրաժարվում որեւէ քայլ անել՝ Աստծո կամքը ավելի լավ հասկանալու համար։ Բայց Աստված անտարբեր չէ, Նա ճանաչում է յուրաքանչյուրիս՝ անուն առ անուն, նա գիտի մեր խնդիրները, լսում է մեր աղոթքները եւ «գիտի, թե ձեզ ինչ է պետք՝ նախքան, որ դուք իրենից կխնդրեք ինչ-որ բան», *ինչպես ասում է Հիսուս (Մտթ.* 6, 8)։ *Աստված կենդանի Աստված է, մեր կյանքում ներկա է՝ մեզ համար անտեսանելի ձեւով, հետեւում է մեր յուրաքանչյուր քայլին եւ մեծ համբերությամբ սպասում է, թե երբ ենք ջանքեր գործադրելու՝ Իր հետ ավելի մտերիմ լինելու համար, թե երբ ենք ջանքեր գործադրելու, որ հասկանանք, թե ի՛նչ է Ինքը ուզում մեզանից, թե ո՛րն է Իր կամքը։ Գուցե, ոչ թե Աստված է անտարբեր, այլ մե՞նք ենք թերանում Աստծո հանդեպ մեր պարտավորությունների մեջ, չէ՞ որ ոչ միայն ծնողն է պարտական զավակի հանդեպ, այլեւ, նախեւառաջ, զավակը՝ ծնողի հանդեպ։ Ուրեմն, ի՞նչ է ուզում մեր Ծնողը, մեր Արարիչ Հայրը մեզանից՝ իր զավակներից։*

Հայր Աստծո կամքն է՝ յուրաքանչյուրիս ազատագրումը մեղքի գերությունից եւ յուրաքանչյուրիս սրբությունը, որի մեջ է կայանում մեր երջանկությունը եւ ներքին խաղաղությունը՝ այս կյանքում եւ հավիտենական կյանքում՝ Տիրոջ հետ միասին։

Աստված ի սկզբանե այս ամենը սահմանել է մարդ արարածի համար՝ որպես մարդկային կյանքի իմաստ եւ առաքելություն։

Աստված նաեւ սահմանել է, որ մեր սրբությանը եւ փրկությանը հասնենք Իր Միածին Որդու՝ Տեր Հիսուս Քրիստոսի եւ Նրա հիմնած Մեկ, Սուրբ Կաթողիկէ Եկեղեցու միջոցով, որը մարդկության համար Նոյան տապանի նման մի նավ է, որի նավապետը Ինքը Քրիստոսն է եւ որի մեջ մենք կարող ենք փրկվել այս աշխարհի մեղքի ջրհեղեղից եւ հավիտենական դժոխքի կրակից։

Աստված Ի՛նքն է կամեցել, որ մարդն այս կյանքում ընդունի Իր աստվածային օրհնությունները, լինի երջանիկ եւ փրկության հասնի՝ բայց ոչ թե առանձին, մենակ աղոթելով, ոչ թե միայն իր բարեկամների հետ մատաղ անելով եւ սեղան նստելով, ոչ թե միայն մկրտվելով, պսակվելով եւ հետո եկեղեցի չհաճախելով, այլեւ լիապե՛ս ապրելով՝ որպես Քրիստոսի Եկեղեցու ջերմեռանդ անդամ, միասի՛ն աղոթելով Քրիստոսի բոլոր եղբայրների եւ քույրերի հետ, այսինքն՝ իր ընտանիքի անդամների հետ, իր ընկերների, հարեւանների, համագյուղացիների, համաքաղաքացիների հետ միասին, նաեւ՝ նրանց հետ, ում հետ տարաձայնություններ կան, անծանոթների հետ միասին, որովհետեւ Աստված սիրում է իր բոլոր զավակներին եւ բոլորի՛ն է հրավիրում եկեղեցի՝ միասնաբար ներկա լինելու Իր Սուրբ Սեղանի շուրջ եւ հարստանալու իր Իր աստվածային ներկայության հոգեւոր զորությամբ, ճիշտ ինչպես իր առաքյալներին հրավիրեց Վերնատուն՝ Խորհրդավոր ընթրիքին եւ նրանց հետ կիսեց հացը եւ բաժակը՝ դրանք դարձնելով Իր Մարմինն ու Արյունը անտեսանելի, խորհրդավոր կերպով։ Ճիշտ առաքյալների պես հացի եւ գինու տեսքով ճաշակելով Տեր Հիսուս Քրիստոսի Մարմինն ու Արյունը՝ մեր մեջ ենք ընդունում Քրիստոսի ներկայությունը, եւ նրա միջոցով՝ ամբողջ Սուրբ Երրորդության ներկայությունը։ Աստված բնակվում է մեր մեջ, իսկ մենք՝ Աստծո մեջ, ըստ Քրիստոսի խոսքի, որն անվիճելի է եւ ճշմարիտ։ Եկեղեցում Սուրբ Սեղանի մոտ հավաքվելիս՝ մենք յուրաքանչյուրս, ճաշակելով Քրիստոսի Մարմինն ու Արյունը՝ միանում ենք ոչ միայն Քրիստոսին, այլեւ՝ միմյանց, որովհետեւ սնվում ենք նույն Քրիստոսով, Նրա միեւնույն Սուրբ Մարմնով եւ Արյամբ, որի մեջ ներկա է Աստված ճշմարտապես, բոլորս լցվում ենք աստվածային նույն ներկայությամբ, դառնում ենք մեկ հոգեւոր մարմին՝ ոչ միայն Քրիստոսի հետ, այլեւ՝ միմյանց հետ։ Ուրեմն, հավաքվելով Տիրոջ Սեղանի շուրջ եւ ճաշակելով Նրա Սուրբ Մարմինն ու Արյունը, բոլոր քրիստոնյաները միմյանց հետ կապվում ենք նույն հոգեւոր կապով՝ հարազատությամբ, դառնում են Քրիստոսի եղբայրները եւ քույրերը՝ ըստ Տիրոջ կամքի, դառնում են Քրիստոսի նույն հոգեւոր կամ խորհրդավոր Մարմնի անդամները։ Սուրբ Պողոս առաքյալը, որ մինչեւ դարձի գալը հալածում էր Քրիստոսի Եկեղեցին, երբ դարձավ Քրիստոսի առաքյալ, իր հիմնած առաջին համայնքներին գրում էր.

«Ինչպես որ մարմինը մեկ է եւ բազում անդամներ ունի, եւ մարմնի բոլոր անդամները, որ բազում են, մեկ մարմին են կազմում, այդպես է նաեւ Քրիստոսը, որովհետեւ մենք ամենքս՝ հրեա, թե հեթանոս, ծառա, թե ազատ, մեկ Հոգով մկրտվեցինք՝ մեկ մարմին կազմելու համար, եւ ամենքս էլ նույն Հոգուց խմեցինք», *Ա Կորնթ.* 12, 12։

Եկեղեցում ի մի հավաքվելով՝ մենք ստանում ենք նույն Սուրբ Հոգին, որը մեզ սովորեցնում է.

–առավել լավ հասկանալ Աստծուն եւ մեր կյանքի իմաստը,

–ավելի շատ սիրել Աստծուն,

–դարձնում է խոնարհ՝ հասկանալու մեր մեղքերը եւ զղջալու դրանց համար,

–դարձնում է ուժեղ՝ պայքարելու մեղքի դեմ, ապրելու սուրբ, աստվածահաճո կյանքով, սիրելու ուրիշներին՝ որպես քույրերի եւ եղբայրների, լինելու ներողամիտ, ապրելու միասնաբար՝ որպես Աստծո մեկ ժողովուրդ, որպես կենդանի Եկեղեցի՝ հոգեւոր ամենօրյա գործունյա ավյունով։

Իսկ միայնակ աղոթելով, տանը մնալով եւ միայն առօրյա գործերով զբաղվելով՝ այս ամենն ունենալն անհնարին է, եւ մեղքի մեջ ակամայից ընկնելը՝ շատ հեշտ։

Այսպես՝ միանական աղոթքով, Տիրոջ Սուրբ Խորանի առջեւ եւ Սուրբ Սեղանի շուրջ հավաքվելով՝ կազմավորվել եւ այսօր էլ շարունակում է կայանալ Քրիստոսի Եկեղեցին, որն, ուրեմն, պետք է հասկանանք ոչ թե միայն քարե շինության իմաստով, այլ՝ իր բուն՝ հոգեւոր իմաստով՝ որպես Հիսուս Քրիստոսին եւ Աստծուն հավատացողների խումբ, ընտանիք, որպես Քրիստոսի խորհրդավոր, հոգեւոր Մարմին։

Ա՛յս պատճառով է անհրաժեշտ եւ պարտադիր յուրաքանչյուրիս համար՝ մեր աղոթքը կատարել ոչ միայն առանձին, այլեւ՝ միասին եւ, հատկապես, Սուրբ Պատարագի ժամանակ՝ հաղորդվելով Տիրոջ Մարմնին եւ Արյանը՝ որպես Քրիստոսի հոգեւոր Մարմնի՝ Եկեղեցու լիարժեք անդամներ, որ չեն ապրում առանձին Գլխից, որ Հիսուսն է, եւ զատված մյուս անդամներից։

Ուրեմն, միասնական աղոթքին չմասնակցելով՝ մենք մասնատում ենք Տիրոջ Եկեղեցին, քայքայում Տիրոջ ընտանիքը, վարվում եսասիրաբար եւ մեղք ենք գործում Աստծո եւ միմյանց դեմ։

Իսկ եթե ձեզանից մեկը խնդիր ունի քահանաների հետ եւ չի ուզում նրանց հետ չփվել, ապա միշտ պետք է մտածել, որ եկեղեցին միայն քահանաները չեն, այլ Եկեղեցին նախ Քրիստոսն է, ապա՝ դուք եւ բոլոր մկրտվածները՝ ներառյալ քահանաները, եւ ոչ ոք՝ որպես մարդ, զերծ չէ թերություններից եւ մեղքերից։ Չի կարելի երես թեքել Քրիստոսից, Նրա Եկեղեցուց եւ մեղք գործել՝ մարդկանց հետ խնդիր ունենալու կամ մարդկանց թերությունները նկատելու պատճառով։ Հիսուսն ասում է.

«Ինչու՞ եղբորդ աչքի միջի չյուղը տեսնում ես, իսկ քո աչքի միջի գերանը չես նկատում... Կեղծավո՛ր, նախ այդ գերանը հանիր քո աչքից, որ կարողանաս հստակ տեսնել եւ ապա կհանես չյուղը՝ եղբորդ աչքից», Մտթ. 7, 3-5։

Մենք բոլորս իրավունք ունենք եւ լիովին ազատ ենք՝ մեր կարծիքները եւ պատկերացումները ունենալու ցանկացած հարցի շուրջ՝ նաեւ հոգեւոր ոլորտում, բայց երբ մկրտվում ենք եւ ինքներս մեզ հայտարարում ենք «քրիստոնյա», ապա պետք է հասկանանք, որ քրիստոնյա լինել՝ նշանակում է կրել Քրիստոսի անունը, իսկ դա էլ նշանակում է այն, որ մարդը ինքն իրեն համարում է Քրիստոսի հետեւորդ՝ Նրա ուսուցումների, Նրա կյանքի օրինակի հետեւորդ եւ պետք է պարտավորված զգա՝ կատարելու այն ամենը, ինչ գրված է Տիրոջ Ավետարանում եւ ինչ որ սովորեցնում է Քրիստոսի Եկեղեցին՝ հոգեւոր սպասավորների միջոցով։ Իսկ Քրիստոս պատվիրեց իր աշակերտներին՝ միշտ աղոթել ոչ միայն առանձին, այլեւ՝ միասին եւ միշտ կատարել Սուրբ Պատարագը, նույն Սեղանի շուրջ ճաշակել Իր Մարմինն ու Արյունը եւ այդպես հիշել այն Իր խաչելությունը, մահը եւ հարությունը (Ա Կորնթ. 11, 23-27)։

Քրիստոսի առաքյալների հաջորդները դարերի ընթացքում եղել են եպիսկոպոսները եւ քահանաները, որոնք շարունակել են մատուցել Տիրոջ Սուրբ Պատարագը եկեղեցում, Քրիստոսի բառերով սրբագործել հացն ու գինին եւ Տիրոջ Մարմինն ու Արյունը բաշխել Տիրոջ ժողովրդին։ Ոչ միայն նրանք, այլեւ բոլոր քրիստոնյաները Տիրոջ կողմից հրավիրված են մասնակցելու ընդհանուր աղոթքներին եւ Սուրբ Պատարագին, հետեւաբար, ներկա չլինել Պատարագին՝ նշանակում է գիտակցաբար չկատարել Քրիստոսի պատվիրանը, ինչը ծանր մեղք է եւ ենթակա է արձակման՝ միայն խոստովանություն կատարելու միջոցով։

Վստահ եմ, որ այս ամենը խորապես հասկանալով՝ չպիտի ուզենաք շարունակել ապրել մեղքի մեջ, եւ հիմա, երբ կարդացիք եւ գիտեք, առավել եւս ծանր մեղք կհամարվի ձեզ համար, եթե հեռու մնաք Սուրբ Պատարագից եւ շարունակեք ձեր նախկին ընթացքը։

Ի վերջո, շաբաթվա մեջ, գոնե, մեկ ժամ Աստծուն նվիրելը եւ Սուրբ Պատարագին մասնակցելը նաեւ հիմնված է Տասը պատվիրաններից 3-րդի վրա՝ «Տիրոջ օրը սո՛րբ պահիր»։ Հրեաների համար այդ օրը սահմանվեց շաբաթ օրը, իսկ մեզ համար շաբաթ օրվանից բացի առավել կարեւոր է կիրակին, քանի որ Հիսուս Քրիստոս հարություն առավ կիրակի օրը։ Սուրբ պահել օրը՝ նշանակում է՝ հանգստանալ առօրյա բոլոր գործերից եւ օրն անցկացնել աղոթքով, Սուրբ Գիրք ուսումնասիրելով եւ բարեգործությամբ։ Հասկանալի է, որ, մանավանդ, գյուղում պետք է միշտ կատարել նաեւ անհրաժեշտ շատ աշխատանքներ, որոնք կարեւոր են ընտանիքի համար։ Սա թույլատրելի է նաեւ Սուրբ Գրքով (Ելք 12, 6), բայց նաեւ աշխատանքի մեջ, այդ օրերին, մանավանդ, կիրակի, բոլորս պարտավոր ենք, գոնե, մեկ ժամ նվիրել Աստծուն եւ գնալ եկեղեցի՝ աղոթելու բոլորի հետ միասին, խոստովանելու մեր մեղքերը, հաղորդվելու Տիրոջ Մարմնին եւ Արյանը՝ որպես շնորհակալություն արտահայտություն աշխատանքի, բարիքների եւ ընտանիքի առողջության համար։ Վստահ եմ, որ ձեր դժվարությունների մեջ շատ բաներ կան, որոնց համար պետք է շնորհակալություն հայտնել Տիրոջը։ Իսկ շնորհակալության լավագույն ձեւը Սուրբ Պատարագին մասնակցելն է։

Սիրելի՛ հավատացյալներ, Տեր Հիսուս Քրիստոս միշտ խոսում է սիրով, բայց՝ կտրուկ եւ հստակ, նույնիսկ, եթե Նրա խոսքերը վիրավորում են մարդուն եւ մտահոգության առիթ դառնում, որովհետեւ Տիրոջ նպատակը մարդկանց բուժելն է, սթափեցնել՝ հոգեւոր անտարբերությունից, իսկ բուժական միջամտությունները նախ ցավեցնում են, հետո՝ բուժում։ Նույնն է նաեւ մեր՝ քահանաներիս, նպատակը եւ պարտականությունը։ Մենք պարտավոր ենք որպես Տիրոջ կողմից կարգված պահակներ եւ հոգեւոր ուղեկիցներ, առաջնորդներ, զգուշացնել ձեզ, որ կատարեք ձեր հոգեւոր պարտականությունները եւ փրկեք ձեր հոգիները, ուղղեք ձեր ընթացքը եւ վայելեք Տիրոջ օրհնությունները ձեր եւ ձեր ընտանիքների համար.

«Մենք մեզ չէ՛, որ քարոզում ենք, այլ՝ Հիսուս Քրիստոսին՝ Տիրոջը, իսկ մեզ՝ որպես ձեր ծառաների՝ ի սեր Քրիստոսի։ Որովհետեւ Աստված, որ ասաց, թե «խավարից թող լույս ծագի», հենց Ինքը ծագեց մեր սրտերում, որպեսզի լուսավորվենք Աստծու փառքի գիտությամբ, որ ճառագայթում է Հիսուս Քրիստոսի դեմքից», Բ Կորնթ. 4, 5-6։

Խորապես շնորհակա՛լ եմ բոլոր նրանց, ովքեր այս ամենը գիտակցում են եւ կանոնավոր կերպով ներկա են միասնական աղոթքներին եւ Սուրբ Պատարագին։

Հասկանում եմ նաեւ նրանց, ովքեր այս օրերին ժամանակավորապես ընդհանուր աղոթքներին ներկա չեն՝ համաճարակի տարածումը կանխելու պատճառով։ Կարոտով կսպասեմ ձեզ հետ հանդիպմանը եւ միասին աղոթելուն։

Տ. Հովսեփ՝ ձեր խոնարհ ծառան՝ ի սեր Քրիստոսի
Հունիս, 2020

Հիսուսի Սուրբ Սրտի պաշտամունքը

«Ահա՛ Սիրտը, որը այդքան սիրեց մարդկանց եւ չխնայեց իրեն մինչեւ վերջ...»

Հունիս ամսին Հայ Կաթողիկէ Եկեղեցում սովորություն է՝ կատարել հատուկ աղոթքներ՝ նվիրված Հիսուսի Սուրբ Սրտին։ Մեծ Սեպասարի Սուրբ Փրկիչ եկեղեցու արեւելյան պատին եւս կա Սուրբ Սրտի որմնաքանդակը, որն արվել է 1990-ականներին եւ, անշուշտ, գյուղում ավանդական բարեպաշտության գոյության մի վկայություն է։

Հիսուսի Սուրբ Սրտի հանդեպ այս գեղեցիկ ջերմեռանդությունը սկիզբ է առել Արեւմուտքում՝ միջին դարերում եւ մուտք գործել նաեւ հայ կաթողիկէ համայնքներ շատ վաղ՝ հատկապես, Մխիթարյան միաբանության հայրերի ջանքերով։

Ի՞նչ է Հիսուսի Սուրբ Սրտի ջերմեռանդությունը. համառոտ

Ի սկզբանե Եկեղեցին խորին հարգանք է տածել մարդկության նկատմամբ Քրիստոսի զոհաբերական սիրո հանդեպ։ Այդ հարգանքն արտահայտվել է տարբեր խորհրդանիշներով. վաղ միջնադարում եղել է Բարի Հովվի կերպարը, միջին դարերում Քրիստոսի հինգ վերքերի եւ փշե պսակով թագադրված պատկերի պաշտամունքը։ Այդ ժամանակ էլ ի հայտ եկավ Հիսուսի Սուրբ Սրտի պաշտամունքը։ Այս ջերմեռանդության հետքերը հիմնականում կարելի է հայտնաբերել Սաքսոնիայի XIII դարի ցիստերցիան միանձնուհիների վանքերում, միջին դարերի սրբերի կենսագրություններում, դոմինիկյան, ֆրանցիսկյան եւ կարտեզյան միաբանությունների գործունեության մեջ։ Եկեղեցական կյանքում Հիսուսի Սուրբ Սրտի պաշտամունքը լայնորեն տարածվեց նոր ժամանակներում՝ 18-րդ դարից սկսած։

Դեռեւս Լյուդովիկոս XIV-ի ժամանակաշրջանի ֆրանսիացի քահանա Սուրբ Ժան Էդը՝ հոգեւոր առաջնորդների թույլտվությամբ, առաջին անգամ 1672թ. մատուցեց Հիսուսի Սրտին նվիրված Սուրբ Պատարագ։ Հենց նա էլ հանդիսանում է Ֆրանսիայում Հիսուսի Սրտի պաշտամունքի ավանդույթի հիմնադիրը։

Հիսուսի Սրտի պաշտամունքի տարածման գործում մեծ դեր են խաղացել միանձնուհի Մարգարիտա Մարիա Ալաքոքի պատմությունները՝ Հիսուսի երեւումների մասին։ Տեր Հիսուսը նրան հայտնվել է 1675թ. Տիրոջ Մարմնի տոնին եւ պատվիրել հաստատել Իր Սրտին նվիրված տոնը։ Քույր Ալաքոքին աջակցում էր իր խոստովանահայր հիսուսյան Հայր Կլոդա դե լա Կոլոմբեն։ 1684թ.-ին լույս տեսավ Կոլոմբեի գիրքը՝ Մարգարիտա Մարիայի երեւումների նկարագրությամբ, իսկ 1691թ.՝ Մարգարիտա Մարիայի կենսագրությունը, որը պատկանում էր հիսուսյան Ժաննա Կրուազեի գրչին։ 1698թ. Ալաքոքը գրեց եւ հրապարակեց իր սեփական գիրքը՝ Հիսուսի Սուրբ Սրտի պաշտանմունքի մասին։ Դրանք բոլորն էլ մեծ հեղինակություն էին վայելում ֆրանսիական հոգեւորականության շրջանում։

Հիսուսի Սուրբ Սրտի պաշտամունքը ընդլայնվում էր, ի հայտ էին գալիս բազմաթիվ եղբայրություններ՝ նվիրված «Հիսուսի Սրտին»։ Առաջին հրապարակային երկրպագությունը Հիսուսի Սրտին եւ համընդհանուր նվիրումը արձանագրվել է 1720թ., Մարսելում՝ ժանտախտի համաճարակի ժամանակ։

1856թ. Պիոս IX Պապը հռչակեց Հիսուսի Սրտի պաշտամունքը՝ որպես պարտադիր բոլոր կաթողիկէ եկեղեցիների համար։

1899թ. հունիսի 11-ին Լեւոն XIII Պապը ամբողջ մարդկությանը աղոթքով նվիրաբերեց Հիսուսի Սուրբ Սրտին՝ դա համարելով իր ամենալավ գործը։ Այդ նվիրաբերության համար նրան խնդրել էր Սուրբ Սրտի միանձնուհի Մարիան՝ Բարի Հովվի միաբանությունից՝ պնդելով, որ դա Տեր Հիսուս Քրիստոսի խնդրանքն է իրեն։ Նա մահացավ հենց Սուրբ Սրտի տոնի օրը։ Լեւոն XIII-ը նաեւ հաստատեց Հիսուսի Սուրբ Սրտի Պատարագ, որը այսուհետ պետք է մատուցվեր յուրաքանչյուր ամսվա առաջին ուրբաթ օրերին։

XX-րդ դարի երկրորդ կեսին՝ Եվրոպային բաժին հասած ծանրագույն ժամանակաշրջանում, Հիսուսի Սրտի պաշտամունքը դարձավ առավել հայտնի։ Սրբացվեցին Հիսուսի Սրտի պաշտամունքի նախակարապետները՝ քույր Մարգարիտա Մարիա Ալաքոքը՝ 1920թ., Հայր Ժան Էդը՝ 1925թ., իսկ Հայր Կլոդ դե լա Կոլոմբեն դասվեց երանելիների շարքը՝ 1992թ.։ Պիոս XII Պապը 1956թ.-ին մի հատուկ կոնդակ նվիրեց Հիսուսի Սուրբ Սրտի պաշտամունքին։

Սուրբ Սրտի տասներկու խոստումները

Գոյություն ունի Հիսուսի Սուրբ Սրտի տասներկու խոստումների մի ցանկ, որի կազմողի անունը հայտնի չէ, բայց, ըստ ավանդության, այդ ցանկը հիմնված է Փրկչի կողմից Սուրբ Մարգարիտա Մարիա Ալաքոքին տրված հայտնությունների վրա։ Այդ խոստումների տեքստը վստահելի է, քանի որ դրանցում արտահայտված են սրբուհու գրառումները։
Ահա եւ ցանկը, որին ավելացրել ենք հղումներ՝ սուրբ Մարգարիտա Մարիայի տեքստերից.

1.*Իմ Սուրբ Սիրտը պաշտողներին ես՝ համաձայն նրանց կյանքի հանգամանքներին, տալիս եմ անհրաժեշտ շնորհներն ու օգնությունը* (*Նամակ* №141)։
2.*Նրանց ընտանիքներում ես կհաստատեմ ու կպահպանեմ խաղաղություն* (*Նամակ* №35)։
3.*Ես կմխիթարեմ նրանց վշտի մեջ* (*Նամակ* №141)։
4.*Ես նրանց համար կլինեմ ապահով ապաստան, հատկապես մահվան ժամանակ* (*Նամակ* №141)։
5.*Ես առատ օրհնություններ կբաշխեմ նրանց բոլոր աշխատանքներին եւ նախաձեռնություններին* (*Նամակ* №141)։
6.*Մեղավորները Իմ Սրտի մեջ կգտնեն անսահման ողորմածություն* (*Նամակ* №132)։
7.*Շնորհիվ բարեպաշտության այս ձեւի՝ դաղջ հոգիները կդառնան նախանձախնդիր* (*Նամակ* №132)։
8.*Նախանձախնդիր հոգիները արագ կհասնեն կատարելության բարձրունքների* (*Նամակ* №132)։
9.*Իմ օրհնությունը կլինի այնտեղ, որտեղ կպաշտեն Իմ Սուրբ Սրտի պատկերը* (*Նամակ* №135)։
10.*Բոլոր նրանց, ովքեր աշխատում են հոգիների փրկության համար, ես տալիս եմ ամենակարծր հոգիները դարձի բերելու շնորհ* (*Նամակ* №141)։
11.*Նրանց անունները, ովքեր տարածում են բարեպաշտության այս ձեւը, ընդմիշտ կդրոշմվեն Իմ Սրտում* (*Նամակ* №141)։
12.*Բոլոր նրանց, ովքեր ինն ամիս շարունակ առաջին ուրբաթ օրերին կհաղորդվեն Իմ Մարմնին եւ Արյանը, ես տալիս եմ հավատը մինչեւ վերջ պահելու եւ հավիտենական փրկություն ձեռք բերելու շնորհ* (*Նամակ* №86)։

Թարգմանեց եւ պատրաստեց՝ Նաիրա Բաղդասարյանը

Հիսուսի Սուրբ Սրտից՝ խաղաղություն մեր սրտերին

«*Եւ նա Հիսուսի կրծքին ընկնելով՝ հարցրեց նրան. «Տեր, ո՞վ է»*»,
Հվհ. 13, 25

Հովհաննեսի ավետարանի 13-*րդ գլխում, ոտնլվայի խորհրդավոր տեսարանից հետո Հիսուս իր աշակերտներին ասաց. «Ճշմարիտ, ճշմարիտ եմ ասում ձեզ, որ ձեզանից մեկն ինձ մատնելու է»։ Աշակերտները իրար էին նայում՝ մտածելով, թե ով է մատնիչը։ Նրանք ոչ միայն կասկածում էին միմյանց, այլեւ, ներքուստ, հավանաբար, մտածում էին, թե գուցե, հենց իրենք են մատնիչը։ Այդ միտքը չէր կարող չտանջել աշակերտներին, որ կիսել էին Հիսուսի առաքելությունը, տեսել Նրա սրբությունը, հավատացել Նրան, սովորել Նրանից, բայց նաեւ ներքուստ հասկանում էին, թե որքա՜ն թույլ են իրենք՝ առանց Հիսուսի, հասկանում էին, թե որքա՜ն մեղավոր են իրենք Հիսուսի առջեւ, թե որքա՜ն փխրուն է իրենց հավատքը եւ քաջությունը, նույնիսկ, Հիսուսի ներկայությամբ։ Հիշենք՝ ինչպես էին նրանք վախեցել, երբ նավարկում էին փոթորկված ծովում, մինչդեռ Հիսուս իրեց հետ էր եւ քնած էր նավակի մեջ, ինչպես Պետրոսը վախեցավ՝ ջրի վրա քայլելիս՝ դեպի Հիսուսը, թե ինչպես նույն Պետրոսը, որ պատրաստ էր իր կյանքը տալ Հիսուսի համար* (*Հվհ.* 13, 37), *երեք անգամ ուրացավ նրան, եւ թե ինչպես բոլոր աշակերտները թողեցին Հիսուսին եւ փախան մատնության գիշերը եւ այլ բազում դրվագներ, երբ Հիսուս նախատում էր իրենց՝ չտարբերելու համար կարեւորը երկրորդականից։ Նրանք հասկանում էին սեփական*

թուլությունը եւ վախենում էին դրանից, մանավանդ, Պետրոսը, որ այնքա՜ն սիրում էր Տիրոջը, եւ իրեն տանջում էր այդ միտքը, թե մատնիչը կարող է լինել եւ ինքը։ Հենց Պետրոսը նշան արեց Հովհաննեսին, «որին Հիսուսը սիրում էր եւ որը նստել էր նրա մոտ», ինչպես կարդում ենք ավետարանում, իմանալ, թե ով է մատնիչը։ Եվ Հովհաննեսը «Հիսուսի կրծքին ընկնելով՝ հարցրեց նրան. «Տեր, ո՞վ է»», Հվհ. 13, 25։ Հովհաննեսն ինքն էլ տանջվում էր եւ ուզում էր այդ հարցի պատասխանը իմանալ, որովհետեւ Հիսուս սիրում էր իրեն յուրահատուկ կերպով եւ պետք է մտածենք, որ իր ամենամեծ փափագն էր հանկարծ չվշտացնել Վարդապետին եւ չվիրավորել նրա սերը իր հանդեպ։

Եկե՛ք ավելի հանգիստ մտածենք այս վսեմ պատկերի մասին՝ Հովհաննեսը հենվեց Հիսուսի կրծքին. այդպես անելով՝ Հովհաննեսը նախ ուզեց օգտվել իր «արտոնյալ վիճակից» եւ իմանալ բոլորին ամենաշատ տանջող այդ հարցի պատասխանը, բայց նախեւառաջ՝ իմանալ, թե արդյոք ինքը չէ այդ մատնիչը։

Տեսե՛ք, թե ինչպե՛ս է ուզում իմանալ Հովհաննեսը՝ Տիրոջ կրծքին ընկնելով։ Սա պարզապես սիրո մի արտահայտություն չէ. Հովհաննեսն ինքն իրեն ամբողջովին հանձնեց Տիրոջ Սուրբ Սրտին, իր ողջ կյա՛նքը վստահեց Տիրոջ սիրույն, Տիրոջ բարությանը, անսահման համբերատարությանը։ Հիսուսի Սուրբ Սրտի Լիթանիայում աղոթում ենք. «Սիրտ Հիսուսի, լի բարությամբ եւ սիրով... երկայնամիտ եւ բազումողորմ», ըստ սաղմոսի խոսքերի։ Հովհաննեսն իր թույլ, իր մեղավոր մարդկային բնությունը ամբողջովին դրեց Տիրոջ կրծքին, մոտեցրեց Տիրոջ Սուրբ Սրտին, որպեսզի Տերն օգնի նախեւառաջ իրեն՝ երբեք չգնալ մատնության։ Հովհաննեսը հասկանում էր, որ ի՛նքը կարող էր լինել առաջին մատնիչը եւ իր հարցի պատասխանը իմանալուց առավել՝ ուզում էր նախ ինքն իրեն հանձնել Տիրոջ կամքին, Տիրոջ պաշտպանությանը, որպեսզի այդ հարցադրման պատասխանի մեջ երբեք չլիներ իր անունը, որ Տերը նախապես ներելով իրեն՝ հետ պահեր իրեն այդ ահավոր սխալը գործելուց, որ Տերը բուժեր իր բոլոր թուլությունները. չէ՞ որ Տերն ամեն ինչ գիտեր։

Մեզանից յուրաքանչյուրս սիրելի ենք Հիսուսի համար, ինչպես Հովհաննեսը։ Երբ երկմտում ենք, վախենում ենք կամ խռովված ենք, եկե՛ք փարվենք Տիրոջ Սուրբ Սրտին, որտեղ լիառատ սփոփանք եւ խաղաղություն կա՝ բոլորիս համար։

Հիսուսի Սուրբ Սրտից խաղաղվում են մեր սրտերը.

«Թող չխռովվեն ձեր սրտերը, հավատացե՛ք Աստծուն, հավատացե՛ք եւ ինձ», Հվհ. 14, 1։

Տ. Հովսեփ Գալստյան
1 հունիսի, 2020

Տիրոջ Սուրբ Սիրտը՝ «բորբոքեալ հնոց սիրոյ»

Տիրոջ Սուրբ Սիրտը «սիրո բորբոքեալ հնոց» է, ինչպես աղոթում ենք Սուրբ Սրտի Լիթանիայում, մի հնոց, որից Տերը սիրո հուր գցեց այս աշխարհի վրա, ըստ Իր խոսքերի. «Երկրի վրա կրակ գցելու եկա, եւ որքա՜ն եմ ուզում, որ արդեն իսկ բորբոքված լիներ», Ղկ. 12, 49։

Սիրո հուրը ճարակել է Տիրոջ Սուրբ Սիրտը եւ սպառվել (Յվհ. 13, 1) մարդու համար՝ առանց ավարտվելու, առանց այրվելու, ինչպես Քորեբ լեռան վրա Տիրոջ հրաբորբ ներկայությունից այրվում էր եւ չէր մոխրանում անկեզ մորենին, որին մոտեցավ Մովսեսը (Ելք 3)։ Նա հանեց իր կոշիկները, տեսավ Տիրոջ ամենաճարակ սիրո հուրը, շլացավ հրեղեն լույսով, ընդունեց այն իր սրտի մեջ, խանդավառվեց այդ հրով եւ բոցավառվեց ամբողջ էությամբ, սրտով ու մտքով եւ գնաց այդ հուրը փոխանցելու Տիրոջ ժողովրդին, այդ հրով առաջնորդեց նրանց անապատի միջով՝ մինչեւ երկիրն ավետեաց։ Այդ հուրը Արարիչն Հայր Աստծո՝ մարդու նկատմամբ ծնողական ի սպառ սիրո հուրն էր, որ ճարակեց Մովսեսին եւ ուղարկեց նրան՝ այդ հուրը տարածելու՝ որպես սիրո հրձիգ. երբ Մովսեսն իջնում էր Սինա լեռան վրայից, նրա դեմքը ճառագում էր լույսերով, եւ նա քողարկում էր, որ ժողովուրդը չսարսափի այդ տեսարանից (Ելք 34, 29–35)։ Աստծո սիրո հուրը պահանջկոտ է. այն պահանջում է նույնպիսի ի սպառ, ինքնազոհաբերության պատրաստ փոխադարձ սեր՝ Աբրահամի նման, եւ կտրուկ հրաժարում մեղավոր կյանքից, ինչին իսրայելացիները պատրաստ չէին, իսկ մե՞նք...

Աստված իր ժողովրդին մշտապես հրավիրում է իր հետ մտերմիկ զրույցի, ինչպես Մովսեսին, ում հետ «խոսում էր շրթունք-շրթունքի, բացահայտ եւ ոչ թե առակներով» (Թվ. 12, 8). սա զրույց է Սրտից դեպի սիրտը, ինչպես մեկը կխոսի իր բարեկամի հետ, բացատրում է Սուրբ Գիրքը։

Հիսուս իր Սուրբ Սրտի սիրո հրով ուղեկցում էր Տիրոջ ժողովրդին անապատում, լուսավորում էր գիշերվա խավարի մեջ, որ նրանք կարողանային առաջ ընթանալ (Ելք 13, 21-22)։

Այդ նույն սիրո հրով Տերը մաքրեց Եսայի մարգարեի շուրթերը, որոնք պիտի քարոզեին ապաշխարություն՝ մեղավոր ժողովրդին. «Եւ ահա ինձ մոտ ուղարկվեց սերովբեներից մեկը՝ ձեռքին այրվող ածուխ բռնած, որ ունելիով վերցրել էր զոհասեղանից։ Բերեց դիպցրեց իմ բերանին եւ ասաց. «Ահա՛ այդ դիպավ քո շուրթերին. դա կհանի քո անօրենությունները, եւ քո մեղքերը կսրբի քեզանից»», Ես. 6, 6։

Տիրոջ Սրտից բխող սիրո հուրը Տիրոջ Խոսքն է, որ առաջնորդում է իր ժողովրդին, Տիրոջ սրտից խոսում է իր ժողովրդի սրտի հետ, Տիրոջ շրթունքներից հոսում է առատորեն իր սիրելիների շրթունքների մեջ, մաքրում պղծություններից եւ ուղարկում առաքելության՝ արիաբար տարածելու այդ սերը եւ Աստծո Խոսքը։

Սուրբ Սրտի հրավառ սիրո պատկեր է ներկայացնում նաեւ այն կրակի հնոցը, որտեղ նետվեցին Դանիելի երեք ընկերները, որոնք հնոցում իրենց աղոթքի մեջ ապաշխարեցին Իսրայելի ամբողջ ժողովրդի փոխարեն՝ իրենք իրենց մատուցելով որպես ողջակեզ՝ որպես նախապատկեր Աստծո Որդու ողջակիզման՝ Խաչի վրա. «Թող այդպես լինի մեր զոհաբերությունն այսօր՝ քո առաջ՝ կատարյալ լինելու... որովհետեւ քեզ հուսացողներս ամոթով չենք մնում։ Արդ գալիս ենք քո հետեւից ամբողջ սրտով...», Դն. 3, 40-41։

Տեր Հիսուս Քրիստոսն Ինքը իջավ այդ հնոցի մեջ՝ մեզ բացատրելու համար Իր՝ սիրո հնոցում այրվելու իմաստը. ապշած Նաբուգոդոնոսորը բացականչեց. «Ես տեսնում եմ արձակված չորս մարդու, քայլում են կրակի մեջ եւ ոչ մի վնասվածք չկա նրանց վրա, իսկ չորրորդի տեսքը նման է Աստծո Որդուն», Դն. 3, 92։ Այդ երեք երիտասարդները Տիրոջ սիրո հնոցում ապաշխարեցին նաեւ չարի մարմնավորում Նաբուգոդոնոսորի համար, եւ սա դարձի եկավ։

Տեր Հիսուս Քրիստոսի սիրո հրի մեջ Տիրոջ հետ միասին քայլելը ապաշխարություն է, նոր կյանքի սկիզբ եւ ճշմարիտ մկրտություն, ինչպես գոչում էր Հովհաննես Մկրտիչը. «...նա ով գալիս է ինձնից հետո... կմկրտի ձեզ Սուրբ Հոգով եւ հրով», Մտթ. 3, 11։

Հիսուս՝ իր սիրո կրակո՛վ է ամեն ինչ համեմում, մաքրազտում. «ամեն ինչ կրակով պիտի աղվի», Մրկ. 9, 49։

Եվ ի վերջո, Ի՛նքն իսկ այրվում է Իր ի սպառ սիրո հնոցի մեջ՝ տառապանքների, Գողգոթայի ճանապարհի հնոցի մեջ, բարձրանում է Խաչի հնոցը, որից դուրս է գալիս անվնաս. ինչպես հնոցից դուրս բերեց երեք երիտասարդներին, այդպես էլ Հայր Աստված Իր Որդուն դուրս բերեց որդիական ինքնանվեր սիրո հնոցից՝ անվնաս, անապական, հարուցյալ, փառավորյալ մարդկային Մարմնով եւ Քրիստոսի խորհրդավոր Մարմնի հետ միասին եւ այդ Մարմնի մեջ, որ Եկեղեցին է, մեր բոլորիս մարդկային մարմիններն անցկացնելով իր հայրական սիրո հնոցի միջով եւ հրով աղելով դրանք՝ դուրս է բերելու հաղթական այս աշխարհում եւ անապական հարուցյալ մարմիններով՝ Ահեղ դատաստանից հետո։

Ուստի սիրելինե՛ր, եկե՛ք ինքներս մեզ ամբողջ սրտով, մտքով, էությամբ եւ զորությամբ նետե՛նք Տիրոջ եւ մարդու հանդեպ ի սպառ կիզող սիրո հնոցը, որպեսզի Տիրոջ հետ միասին դուրս գանք՝ սրբագործված, համեմված, վերանորոգ մարդկային սրտով՝ նման Հիսուսի Սուրբ եւ բոցակեզ Սրտին.

«Արա՛ զսիրտ մեր ըստ սրտին քում», Լիթանիա Սուրբ Սրտին Յիսուսի։

Տ. Հովսեփ Քհն. Գալստյան
08 հունիսի, 2020



Սիրտ Յիսուսի՝ «աղբիւր կենաց եւ սրբութեան... ի խոր խոցեալ տիգաւ»

«Ո՛վ Յիսուս, Աղբիւր ջրոյ կենդանւոյ, առ Քեզ ծարաւիմ, Քեզ փափագիմ, Քեզ տոչիմ, տու՛ր իմ ծարաւեալ ոգւոյս զՔեզ զովացումն։ Ծարաւիմ ըմպել ի կրկին վտակաց կողիդ, որով եւ արբեալ սիրով զմայլիմ», Սբ. Ներսես Լամբրոնացի

Տիրոջ Սուրբ Սիրտը «կենաց աղբյուր» է, ըստ Լիթանիայի բառերի, հավերժահոս աղբյուր, որտեղից բխող ջուրը աստվածային սիրո եւ ողորմության հեղումն է՝ աշխարհի վրա։ Հովհաննեսի ավետարանի 7-րդ գլխում կարդում ենք, որ Տաղավարահարաց տոնի վերջին օրը Հիսուս կանգնած էր եւ աղաղակում էր. «Եթե մեկը ծարավ է, թող ինձ մոտ գա եւ խմի», (Հվհ. 7, 37)։ Սամարացի կնոջ հետ զրուցելիս՝ ջրհորի մոտ, Հիսուս եւս խոսում է այն ջրի մասին, որ Ինքն է տալիս. «...ով խմի այն ջրից, որ ես եմ տալու նրան, հավիտյան չպիտի ծարավի։ Իսկ այն ջուրը, որ ես նրան տալու եմ, նրա մեջ կդառնա բխող ջրի աղբյուր՝ հավիտենական կյանքի համար» (Հվհ. 4, 13-14)։ Հիսուս այս ասում էր այն տոնի ժամանակ, երբ հրեաները հիշում էին Եգիպտոսի գերությունից հետո իրենց անապատային տարիները։ Եվ այդ տարիներին էր, որ Մովսեսն աղոթեց Տիրոջը, ձեռքի գավազանով հարվածեց ժայռին, եւ ջուր բխեց (Թվ. 20, 7-13)։ Հիսուս՝ խոսելով իր մասին՝ որպես ջրի աղբյուրի, ինքն իրեն բացահայտում է որպես ճշմարիտ ժայռ, որից բխում է դեպի հավիտենական կյանք տանող ջուրը։ Եվ այդ ջուրը Տիրոջ Սուրբ Սրտից հեղվում է յուրաքանչյուրիս սրտի մեջ, ով նրան մոտենում է՝ դարձի եկած այն սամարացի կնոջ խոսքերը սրտում պահած եւ որպես աղոթք՝ իր շուրթերի վրա. «Տե՛ր, տու՛ր ինձ այդ ջուրը, որպեսզի չծարավեմ» (Հվհ. 4, 15)։ Հիսուս Իր Սրտում կատարում է մարգարեությունները. «Դուք ուրախությամբ ջուր կվերցնեք Փրկչի աղբյուրից», Ես. 12, 3, «եւ Գառը ... կհովվի նրանց ու կառաջնորդի նրանց դեպի կյանքի աղբյուրը», Հյտն. 7, 17, «Հրեշտակն ինձ ցույց տվեց նաեւ բյուրեղի պես մաքուր կենդանի ջրի մի գետ, որ բխում էր Աստծո եւ Գառան գահից, այն հոսում էր քաղաքի հրապարակների միջով...», Հյտն. 22, 1։

Տիրոջ Սուրբ Սրտից բխող կենդանի ջրի ամենակատարյալ պատկերն ավետարանում, թերեւս, Հովհաննեսի մոտ նկարագրվող խաչելության դրվագն է, երբ զինվորը տեգով խոցեց խաչյալ Հիսուսի կողը, եւ «իսկույն արյուն եւ ջուր ելավ» (Հվհ. 19, 34)։ Եկեղեցու հայրերի համար Հիսուսի տեգով ծակված կողից հոսող ջուրը եւ արյունը Նրա Սուրբ Սրտից առատորեն հոսող սիրո բխումն է, որից սկիզբ է առնում եւ սնվում, լիառատ ողողվում Տիրոջ Սուրբ Եկեղեցին՝ Քրիստոսի խորհրդավոր Մարմինը։ Հիսուսը խաչվեց, որից հետո՛ միայն Իր Սիրտը առատորեն

բացեց՝ որպես կենդանի եւ անսպառ ջրի աղբյուր՝ ամբողջ աշխարհի համար, ըստ ավետարանչի խոսքերի. «Ով ինձ հավատում է, նրա ներսից կենդանի ջրերի գետեր պիտի բխեն»։ Նա այս խոսքերն ասում էր Հոգու մասին, որն ընդունելու էին Իրեն հավատացողները, քանի որ Հոգին դեռեւս չուներին, որովհետեւ Հիսուսը դեռ փառավորված չէր» (Հվհ. 7, 38-39)։ Հիսուսի փառավորու՛մը եղավ Իր խաչելության ժամը, որի լրումն էր, կարծես, զինվորի տեգով կողի խոցվելը, որտեղից Իր Հոգին՝ ջրի եւ արյան տեսքով, հոսեց ու ողողեց իր առաքյալներին եւ բոլոր Իրեն հավատացողներին։ Այս պատկերը նաեւ եղավ բացատրությունը Կանայի հարսանիքի հրաշքի, երբ Հիսուս տաշտակների ջուրը գինի դարձրեց՝ ի կանխանշումն իր կողից հեղվելիք ջրի եւ արյան, Սուրբ Հոգու հեղման, որ լիուլի լցնում է բոլոր հավատացյալների հոգիներն ու սրտերը, ինչպես ընտիր գինին արբեցրեց Կանայի հարսանքավորներին։ Ուրեմն, Տիրոջ տիգախոց Սիրտը դարձավ ակունքը՝ Սուրբ Հոգու հեղման, որ Ամենասուրբ Երրորդության մեջ հավիտենապես գոյություն ունեցող Սերն է, ըստ առաքյալի խոսքի. «Աստված սեր է» (Ա Հվհ. 4, 16), որը լցվում է մեր մեջ. «Աստծո սերը լցվում է մեր սրտերում՝ Սուրբ Հոգու միջոցով, որ տրվեց մեզ» (Հռմ. 5, 5)։

Սուրբ Երրորդության հավիտենական սիրով, որ բխում է Հիսուսի Սուրբ Սրտից եւ Հոգով լցվում մեր մեջ, մենք կայանում ենք որպես Տիրոջ մեկ ընտանիք, մեր խորհրդավոր Մարմին, որտեղ կոչված ենք արտացոլելու Սուրբ Երրորդությունը՝ որպես սիրո ամենակատարյալ համայնք։ Սա՛ է տանում դեպի սրբություն՝ Աստծո սերը, սա՛ է մեր սրտերը ձգում դեպի աստվածային Սուրբ Սիրտը, ըստ Իր խոսքի՝ «երբ բարձրանամ երկրից, բոլորին կձգեմ դեպի ինձ»։ Հիսուս իր Խաչի վրայից մեզ ձգում է դեպի Իր տիգախոց Սիրտը եւ տալիս է ու սովորեցնում ի սպառ սեր, որ սրբացնում է մարդուն, ինչպես Հիսուս Ինքն Իրեն սրբացրեց մեզ համար.

«Եվ ես ինձ սրբացնում եմ նրանց համար, որպեսզի նրանք էլ սրբացվեն ճշմարտությամբ», Հվհ. 17, 19։ Հիսուս Հոր աջ կողմում է եւ մեզ բոլորիս ձգում է դեպի Երկինք՝ ճշմարտության Հոգով, որ առաջնորդում է մեզ դեպի սրբություն։

Տ. Հովսեփ Քհն. Գալստյան
16 *հունիսի*, 2020

ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՆ՝ Ի ԳՈՐԾ

Սիզավետի երիտասարդների մեջ կա մի կորիզ, որ ունի ջերմեռանդ հավատքի ապրում, մշտապես ներկա է Սուրբ Պատարագին եւ մյուս միասնական աղոթքներին, քայլեր է կատարում՝ հոգեւոր-հասարակական ծրագրեր իրականացնելու ուղղությամբ։ Երիտասարդներին կարելի է միասին տեսնել հատկապես եկեղեցական տոների օրերին, միասին աղոթելիս, բեմադրություններ անելիս, հատկապես, Սուրբ Սարգսի ժամանակ, երբ միասին տոնում ենք սրբի հիշատակը, խնդրում նրա բարեխոսությունը, ապա հավաքվում են, զրուցում, արտասանում բանաստեղծություններ, խոսում ապագա անելիքների եւ գյուղի երիտասարդական կյանքն աշխուժացնելու մասին։ Նրանցից մի քանիսը նաեւ ամեն տարի կամավոր սկզբունքով աշխատում են «Աղաջանյան ամառային ճամբարում»՝ որպես ջոկատավարներ։ Որպես լավ ջոկատավարներ՝ 2019-ին նրանցից երեքը մեկնեցին նաեւ Լիբանան եւ մասնակցեցին Մյուռոնօրհնեքի արարողությանը։ Ամենաակտիվները ամեն 3 տարին մեկ նաեւ մասնակցում են Համաշխարհային երիտասարդական օրերին՝ աշխարհի տարբեր երկրներում։ Մեզ դեռեւս չի հաջողվել ձեւավորել կանոնավոր օրակարգով երիտասարդական միություն, բայց գտնվում ենք այդ ճանապարհին՝ սպասելով նախաձեռնող երիտասարդների, ովքեր կկարողանան ժամանակ տրամադրել գյուղում կանոնավոր աշխատանքների իրականացմանը։

«Հույսի եւ փոփոխություն առաջամարտիկները». Սիզավետի երիտասարդները մասնակցում են համայնքային զարգացման սեմինարների

2020թ. հունվարի 27-ին Գյումրիի Լոֆթ մշակութային-ժամանցային կենտրոնում կազմակերպեցինք 2-րդ զարգացողական սեմինարը՝ Աչոցքի հայ կաթողիկէ չորս համայնքների՝ Մեծ Սեպասարի, Բավրայի, Ղազանչիի եւ Սիզավետի 35 պատանիների եւ երիտասարդների համար։ Որպես սեմինարի խորագիր ընտրեցինք «Երիտասարդները՝ փոփոխությունների առաջամարտիկներ», որը տրամաբանական շարունակությունն է նախորդ սեմինարի, որ կոչվում էր «Երիտասարդները՝ հույսի առաջամարտիկներ»։ Սեմինարի կազմակերպման նպատակը երիտասարդներին օգնելն է՝ լինելու իրենց համայնքներում դրական փոփոխությունների նախաձեռնողներ, գաղափարներ գեներացնողներ, խնդիրների լուծումների նոր ճանապարհների որոնողներ, նոր զարգացողական ծրագրեր մշակողներ եւ իրականացնողներ՝ ամենատարբեր ոլորտներում՝ առաջնորդվելով Ավետարանի սկզբունքներով եւ հավատքով։

Սեմինարը վարելու համար հրավիրել էինք նաեւ Քրիստինե Մխիթարյանին, որ երիտասարդների հետ աշխատանքի մեծ փորձ ունի եւ Հայկական Կարիտասի «Մխական հասարակական խորհուրդներ», «Շահերի պաշտպանություն» ծրագրերի ղեկավարն է։

Նախ այս սեմինարների կազմակերպման իմ տեսլականի եւ հետագա անելիքների մասին խոսեցի հետեւյալը.

«Սիրելինե՛ր, այս երկրորդ սեմինարը շարունակում է նախորդի թեման։ Տրամաբանությունն հետեւյալն է. դուք կոչված եք լինելու եւ արդեն իսկ հանդիսանում եք Եկեղեցու եւ ձեր համայնքի հույսը, եւ որպես այդպիսին, կոչված եք լինելու եւ արդեն իսկ սկսել եք լինել Եկեղեցում եւ համայնքում դրական փոփոխությունների կրողները կամ առաջամարտիկները։ Նախ ի՞նչ է նշանակում այս բառը՝ «առաջամարտիկներ». առաջամարտիկներն այն զինվորներն են, ովքեր մարտի դաշտում գնում են զորքի առջեւից եւ, ըստ էության, առաջնորդում են բանակը։ Դուք պետք է լինեք այդպիսի զինվորների նման՝ որպես կենդանի հույս Եկեղեցու համար եւ համայնքի համար, ինչպես որ ձեր ընտանիքների հույսն եք։

Նախորդ սեմինարի ժամանակ խոսեցինք ձեր մեջ թաքնված եւ արդեն իսկ դրսեւորվող հսկայական ներուժի, հավատքի, լավատեսության, ապագայի հանդեպ վստահության մասին։ Այդ վստահությունը բխում է ձեր հավատքից, որ ապրում եք միասին՝ Տեր Հիսուս Քրիստոսի հետ միության մեջ, գործադրում եք մեր երիտասարդական միության տարատեսակ ձեռնարկներում։

Հավատքի կենդանի ապրումը, զարգացումը հնարավոր է՝ մշտապես պահելով երիտասարդական ավյունը, խանդավառությունը, նոր բարձունքներ նվաճելու կամքը, փափագը, ապագայի վառ երազանքները, գաղափարներ, որոնք թվում են շատ դժվար իրագործելու համար, բայց շարունակ ոգեշնչում եւ կանչում են դեպի նոր նվաճումներ, զարգացում, կատարելագործում։ Այս ամենը կախված է ձեզանից եւ ձեր առջեւում է, սպասում է ձեզ, թե երբ եք սկսելու ձեր պայքարը, թե երբ եք վճռականորեն մարտի բռվելու ձեր իսկ թուլությունների դեմ, ձեր հուսահատությունների դեմ, ձեր եւ ձեր ծնողների, ընկերների անհույս վատատեսության դեմ, երբեմն նույնիսկ ոչինչ չանելու եւ ինքնահոսի մատնվելու վիճակի դեմ, որ համակում է շատ երիտասարդների եւ մեծահասակների։ Դուք պետք է մարդկանց հու՛յս ներշնչեք ձեր եռանդով եւ ձեր կոնկրետ գործերով, ծրագրերով, համայնքի կյանքում բերելով դրական փոփոխություններ, որոնք բոլորի համար անվիճելի են եւ հուսադրող, որոնք կարող են փաստել բոլորին, որ ամենաանհույս պայմաններում նույնիսկ հնարավոր է եւ պե՛տք է աշխատել՝ ելքեր գտնելու համար, եղածը ավելի լավը դարձնելու, կատարելագործելու համար, Աստծո առաջ ամեն ժամ ավելին լինելու համար, ավելի հոգեւոր, ավելի սուրբ, ավելի արդար լինելու համար, ավելի կիրթ եւ բարձրաճաչակ լինելու համար, ավելի բարեկեցիկ ապրելու համար։

Ուրեմն, փոփոխությունների սկիզբը ձեր մեջ եղած հույսն է, որ հիմնված է ձեր հավատքի եւ Աստծո հանդեպ ձեր սիրո վրա։ Պետրոս առաքյալն իր նամակում ասում է հետեւյալը.

«Մշտապես պատրաստ եղեք պատասխան տալու ամեն մարդու, որ կհարցնի ձեր մեջ եղած հույսի մասին», ***Ա Պտ.*** 3, 15։

Հույսի մասին պատասխան տալ պետք է մեր հավատքի եւ սիրո վկայությամբ, որ պետք է արտահայտվի մեր գործերով։ Այդ գործերը պարտադիր չէ, որ լինեն մեծ ծրագրեր, այլ պետք է սկսվեն փոքրիկ քայլերից, որոնք սակայն, արվում են մեծ սիրով, ինչպես ասում է Սբ. Մայր Թերեզան։ Միայն մեկ կարեւոր բան կա. այդ փոքրիկ քայլերը պետք է լինեն անընդհատ եւ միշտ առավել շատ, որակապես առավել բարձր։

Եթե հիշում եք, այս տարեսկզբի հանդիպման ժամանակ ես ասացի, որ այս տարի ավելի շատ բան ենք անելու, քան՝ նախորդ տարի եւ մեր միության թերթը առավել շատ բան պետք է պատմի համայնքին ձեր մասին։ Այդ քայլերը պետք է անենք միասին, եւ հարկ է, որ ձեզանից յուրաքանչյուրը հանդես գա նոր գաղափարներով, որոնք կարող են վերաբերել եւ՛ եղած քայլերը ավելի լավը դարձնելուն եւ՛ նոր քայլեր անելուն, ծրագրեր կազմելուն եւ իրականացնելուն, անկախ նրանից՝ այդ ծրագրերն իրականացնելու հնարավորություններն այս պահին կան, թե ոչ։

Պետք է յուրաքանչյուրդ ինքներդ ձեզ պատկերացնեք որպես անընդհատ ստեղծագործող եւ երբեք կանգ չառնող ստեղծարարներ, գյուտարարներ, արվեստագետներ, ճարտարապետներ՝ բայց ոչ նեղ մասնագիտական իմաստով։

Յուրաքանչյուրդ պետք է լինեք գաղափարներ ծնող եւ զարգացնող պարարտ հող, որոնց մեջ կա կյա՛նք եւ այն միշտ խոստանում է աճել, զարգանալ՝ ճիշտ Երկնքի Արքայության սերմի նման, որն ինչպես Հիսուս ասում է, սկզբում մանանեխի հատիկի չափ է, բայց երբ աճում է, դառնում է մի մեծ ծառ, որի ճյուղերին հանգստանում են թռչունները։ Այսպիսին պետք է լինի ձեր յուրաքանչյուր գաղափարը եւ ծրագիրը. նախ՝ փոքր կամ դեռեւս անորոշ, սաղմնային վիճակում, բայց երբ մտածեք յուրաքանչյուր քայլը, աշխատեք, փորձ ձեռք բերեք եւ, որ շատ կարեւոր է, աղոթեք այդ գաղափարների համար, դրանք կաճեն կդառնան իսկական ծառեր եւ շատերի համար կլինեն զարգացման, բարեկեցության, հոգեւոր մխիթարության հնարավորություններ։

Ես աղոթում եմ, որ դուք լինեք առավել ջերմեռանդ հավատքի մեջ եւ առավել ջանասեր ինքնուրույն նախաձեռնություններով հանդես գալու եւ դրանք իրագործելու միջոցները գտնելու մեջ։ Այսպիսի հանդիպումները ձեզ կօգնեն լինել ավելի նախաձեռնող եւ գտնել հնարավորություններ։

Դավիթ թագավորը, որ նաեւ սաղմոսներ էր գրում, մի շատ ոգեւորիչ աղոթք ունի.

«Տե՛ր, Քեզնո՛վ միայն զինված պիտի վազեմ եւ իմ Աստծու շնորհիվ պիտի անցնեմ պարսպի վրայով», Բ Թգ., 22։30։

Քրիստինե Մխիթարյանն իր կարեւոր նյութը երիտասարդներին ներկայացրեց հետաքրքիր բացատրություններով եւ քննարկումների միջոցով, լսելով երիտասարդների կարծիքները, նրանց առիթ տալով խորհրդածել սեփական կարողությունների, տաղանդների մասին, թե ինչպես կարող են դրանք դրսեւորել եւ ինչպես կարող են գաղափարներ հղանալ ու զարգացնել իրենց համայնքներում։ Նա շեշտեց, որ յուրաքանչյուր անձ կարող է փոփոխություններ բերել իր իրականության մեջ՝ ջանալով ոչ թե նախ փոխել իրականության պայմանները, այլ՝ նախ սեփական անձը, հաղթահարել վախերը, թերահավատությունը, սահմանել նպատակներ, երազանքներ, ոգեշնչվել ու ջանք թափել դրանք իրականություն դարձնելու համար՝ չվախենալով միջոցների սահմանափակ լինելուց։ Նա առաջարկեց երիտասարդներին մտածել «աշխարհը փոխելու 6 *քայլերի մասին», դրանք են՝*

1.*ոգեշնչվել,* 2.*լինել տեղեկացված,* 3.*բացահայտել սեփական տաղանդները, ուժեղ կողմերը,* 4.*լինել խիզախ եւ գործել՝ մանրամասն ծրագրելով ամեն մի քայլ,* 5. *թույլ կողմերը լրացնել ուրիշների օգնությամբ, թիմային աշխատանքով, գտնել ճիշտ մարդկային ռեսուրսներ,* 6.*տոնել յուրաքանչյուր փոքր հաղթանակ՝ վստահ լինելով, որ կարողացար դրական փոփոխություն բերել։*

Քրիստիներից հետո Բավրայի Երիտասարդական միության անդամ Անդրանիկ Մարգարյանը, որ այս տարվա հունվարի 12-21-*ը Հայկական Կարիտասի կողմից հրավիրվել էլ Ֆրանսիայում մասնակցելու համայնքներում սոցիալական ծրագրերի փորձի փոխանակման մի ծրագրի, պատմեց Ֆրանսիայում Կարիտասի ծրագրերի եւ գաղափարների մասին, որոնք կարող են երիտասարդներին օգնել զարգացնել իրենց գաղափարները տեղի համայնքներում։*

Հանդիպումն ավարտվեց միասնական աղոթքով եւ թեման հետագա սեմինարներում զարգացնելու մասին քննարկումներով, գաղափարային նոր առաջարկներով։

Տ. Հովսեփ Գալստյան

«Ժամանակը հնարավորություն է». առցանց երկու սեմինար



Ցավալի է, որ այս չարիք համաճարակի օրերին անհնար է դարձել կազմակերպել միասնական հանդիպումներ երիտասարդների եւ պատանիների հետ, բայց ջանում ենք գտնել ուղիներ՝ պահելու մշտական կապը, հաղորդակցությունը միմյանց միջեւ, այլապես մեզ սպառնում է իրական սոցիալական հեռացումը։ Մենք, որպես Տիրոջ ընտանիք, որ կապված ենք միմյանց հետ որպես Տեր Հիսուս Քրիստոսի Խորհրդավոր Մարմնի անդամներ՝ միմյանց շաղկապված Տիրոջ Սուրբ Հաղորդությամբ, պարտավոր ենք ամեն ժամ առավել զարգացնել եւ ջերմ պահել հոգեւոր եւ սոցիալական մտերմությունը միմյանց միջեւ՝ անկախ այն բանից, թե համաճարակը դեռ քանի օր մեզ կստիպի ֆիզիկապես հեռու գտնվել միմյանցից եւ Սուրբ Հաղորդությունը իրապես ճաշակելուց։ Այս մտայնությամբ որոշեցինք երիտասարդական հանդիպումները, սեմինարները շարունակել՝ օգտագործելով համացանցային սոցիալական ցանցերի հնարավորությունները, ինչը լավագույն արդյունք չի խոստանում, բայց, վստահաբար, միշտ արդյունավետ հոգեւոր շարժման մեջ է պահում բոլորիս, եւ հիշում ենք, որ միասին ենք,

որ ունենք միասնական առաքելություն՝ զարգանալ որպես Տիրոջ Եկեղեցի, որպես համակողմանիորեն զարգացած, հասարակական բարիք ստեղծող, նախաձեռնող անհատներ. «Հոգով եռացե՛ք», Հռմ. 12, 11։

Առցանց հանդիպումների համար որպես առաջին թեմա ընտրեցինք «Ժամանակի կառավարումը», որի շուրջ խոսեցինք երկու հանդիպումների ընթացքում։ Մասնակցեցին քսան երիտասարդներ ու պատանիներ՝ Բավրայից, Մեծ Սեպասարից, Ղազանչիից եւ Սիզավետից։ Առցանց սեմինարը վարեցին Հայկական Կարիտասի Շահերի պաշտպան Քրիստինե Մխիթարյանը, Բավրայի երիտասարդական միության համակարգող Անդրանիկ Մարգարյանը եւ ես։

Առաջին հանդիպման (27 ապրիլի, 2020) ընթացքում, որպես նախաբան, նախ խոսեցի առցանց սեմինարներ կազմակերպելու այս նախաձեռնության նպատակի մասին եւ քաջալերեցի երիտասարդներին ակտիվորեն մասնակցել, որովհետեւ թանկ է յուրաքանչյուրի՛ կարծիքը եւ նախաձեռնությունը։ Շեշտեցի, որ ժամանակը Աստծո պարգեւն է մեզ եւ, ըստ էության, մեր կյանքն է, որ ապրում ենք այս աշխարհում։ Մենք պարտավոր ենք այդ մեծ պարգեւն օգտագործել պատասխանատվությամբ՝ գնահատելով յուրաքանչյուր վայրկյանը եւ այն դարձնել հնարավորություն՝ զարգանալու համակողմանիորեն որպես մարդ, որ կրում է Աստծո պատկերը եւ նմանությունը, ոչ կոչված է իր աստվածատուր տաղանդներն օգտագործել ոչ միայն իր կատարելագործման, այլեւ համընդհանուր բարիք ստեղծելու համար՝ եղբայրասիրության ավետարանական եւ համամարդկային սկզբունքներով։

Քրիստինե Մխիթարյանը ներկայացրեց ժամանակը ճիշտ կառավարելու մի քանի հմտություններ, սկզբունքներ, օրինակ՝ ինչպես կազմակերպել օրվա զբաղվածության ժամանակացույցը, որ հնարավոր լինի առավելագույնս արդյունավետ օգտագործել օրը եւ ժամանակ խնայել։ Անդրանիկ Մարգարյանը կազմակերպեց խաղ-վարժանք՝ սովորելու համար, թե ինչպես կարելի է գործողությունները կատարել ավելի քիչ ժամանակ ծախսելով։

Երկրորդ հանդիպումը (3 մայիսի, 2020) շարունակեց առաջինի թեման՝ այլ շեշտադրությամբ՝ «Ժամանակը հնարավորություն է»։ Աստված մեզ պարգեւել է մեր կյանքի ժամանակը, բայց ինչի՞ համար. սա էր գլխավոր հարցադրումս երիտասարդներին։ Հրավիրեցի մտածել հետեւյալ հարցերի շուրջ.

-ինչպե՞ս օգտագործել ժամանակը՝ մեր նպատակներին եւ երազանքներին առավելագույնս ծառայեցնելու համար,

-ինչպե՞ս տարբերել առաջնայինը երկրորդականից, ի՞նչ սկզբունքներով առաջնորդվել՝ զբաղվածության արժեքը գնահատելիս,

-ինչպե՞ս անցկացնել ժամանցը եւ հանգիստը, որ չստացվի ժամանակի վատնում։

Քրիստինե Մխիթարյանը ներկայացրեց նպատակներ սահմանելու եւ առաջնայինը երկրորդայինից զանազանելու սկզբունքներ եւ բացատրեց, թե ինչպես կարելի է դրանք կիրառել։ Նյութը շատ հարուստ էր եւ հետաքրքիր, խնդրեցի, որ այդ հարցերի շուրջ առավել երկար ու հանդարտ մտածեն մեր երիտասարդները։

Անդրանիկը ներկայացրեց համակարգչային ծրագրեր՝ նպատակները դասակարգելու, ժամանակը ճիշտ կառավարելու համար։

Երիտասարդներն արտահայտեցին իրենց կարծիքները, սեփական պատմությունները՝ նպատակները սահմանալու եւ իրենց առաքելությունը հասկանալու մասին, որոնք շատ հետաքրքիր էր լսել։ Ես էլ կիսվեցի իմ փորձառությամբ, որ, հուսով եմ, օգտակար եղավ։

Ժամանակը ճիշտ բովանդակությամբ ապրելը, թերեւս, ամենաառանցքային խնդիրներից մեկն է այսօր՝ երիտասարդի համար, որ ապրում է իր կյանքի ամենակարեւոր որոշումները կայացնելու վճռական տարիները։ Որպեսզի հետո չզղջանք սխալ որոշումներ կայացելու եւ մեր հնարավորությունները բաց թողնելու համար, հարկ է այսո՛ր, հենց հիմա՛, ժամանակ չկորցնել եւ ինքներս մեզ համար հստակեցնել, թե որն է մեր երազանքը, որոնք են մեր նպատակները, դեպի ուր ենք գնում, ինչի համար ենք սովորում կամ աշխատում։ Այս բարդ եւ պատասխանատու ճանապարհը մենք պարտավոր ենք անցնել Տեր Հիսուս Քրիստոսի՝ մեր միակ անդավաճան ընկերոջ եւ Խորհրդատուի հետ միասին, աղոթքով եւ Նրա Սուրբ Անձի հետ մտերմությամբ, որպեսզի իր օգնությամբ կարողանանք գնահատել մեր յուրաքանչյուր վայրկյանը եւ ճիշտ օգտագործենք՝ ինքներս մեզ եւ հասարակությանը առավելագույն բարիք անելու համար՝ ի փառս Աստծո։

Տ. Հովսեփ Գալստյան

Հայ երիտասարդները եւս գործուն կերպով միացան Սրբազան Պապի Laudato Si նամակի հոբելյանական շաբաթվան

2020թ. մայիսի 16-24-ը Սուրբ Աթոռի Մարդկային համապարփակ զարգացման վարչության նախաձեռնությամբ հայտարարվեց Ն.Ս. Ֆրանցիսկոս Քահանայապետի 2015թ. հրապարակած «Գովեմ զՔեզ»՝ Laudato Si, շրջաբերականին նվիրված շաբաթ։ Նպատակն էր՝ հինգ տարի անց ողջ Ընդհանրական Եկեղեցու ուշադրությունը դարձյալ հրավիրել այդ հույժ կարեւոր եւ միշտ արդիական սոցիալ-բնապահպանական բովանդակության փաստաթղթի վրա եւ առիթ տալ վերստին մտածելու նամակի տեսլականի եւ առաջ քաշած մարտահրավերների շուրջ։

Սուրբ Աթոռի վարչության հրավերին ընդառաջեցին աշխարհի շատ կաթողիկէ համայնքներ եւ բարեսիրական կազմակերպություններ։ Մենք եւս ջանացինք կիսել այդ համընդհանուր համերաշխությունը եւ փաստաթղթի արժեքները։ Հայաստանի հյուսիսային չորս կաթողիկէ համայնքների՝ Մեծ Սեպասարի, Ղազանչիի, Բավրայի եւ Սիզավետի երիտասարդների հետ միասին նախաձեռնեցինք միջոցառումների շարք, որոնք կոչված են իրենց հերթին լինելու մեկնարկ՝ ամբողջ տարվա համար նախատեսվող միջացառումների։ Այս նախաձեռնությանն իր աջակցությունը հայտնեց նաեւ Հայկական Կարիտաս բարեսիրական կազմակերպությունը, որի՝ համայնքներում իրականացրած ծրագրերում, որպես կամավորականներ, ընդգրկված են նաեւ այդ համայնքների երիտասարդները։

Մայիսի 16-ին եւ 17-ին չորս համայնքների եկեղեցիների եւ երիտասարդական կենտրոնների տարածքներում կատարեցինք մաքրման աշխատանքներ։ Մայիսի 17-ին եւ 24-ին չորս համայնքների 20-ից ավելի երիտասարդների հետ կազմակերպեցինք երկժամյա առցանց երկու սեմինար, որոնց ընթացքում երիտասարդներին ներկայացրեցի «Գովեմ զՔեզ» փաստաթղթի բովանդակության հիմնական էությունը, քննարկեցինք առանձին գաղափարներ, սոցիալ-բնապահպանական խնդիրները, դրանց լուծման երիտասարդական պատկերացումները, իրենց պատրաստած հետաքրքիր նյութերը ներկայացրեցին նաեւ երիտասարդները (Կատյա Մարգարյան, Անդրանիկ Վարդանյան)։ Այսպիսով, հարթակ ստեղծվեց նաեւ երիտասարդների ինքնարտահայտման համար՝ անկախ մասնագիտական պատրաստվածությունից։ Որոշեցինք առաջիկա օրերին միասին իրականացնել բնապահպանական փոքրիկ ծրագրեր՝ ծառատունկ, տարածքները, դաշտերը, լճերի տարածքները աղբից մաքրելու, մարդկանց իրազեկման գործողություններ, առցանց եւ կենդանի միջոցառումներ։

Ծառատունկը իրականացրեցինք Հայկական Կարիտասի օգնությամբ։ Տիրոջ Համբարձման տոնին Բավրա, Սիզավետ եւ Ղազանչի համայնքներում տեղի կամավորական երիտասարդների հետ միասին տնկեցինք հինգ տեսակի (բարդի, հացենի, լորենի, թխկենի, կաչտան) դեկորատիվ 120 ծառ՝ եկեղեցիների եւ Ղազանչիի երիտասարդական համալիր կենտրոնի բակերում։ Երիտասարդները ստանձնել են պատասխանատվություն՝ մշտապես պահպանելու նորատունկ ծառերը, որովհետեւ դրանք երաշխիք են իրենց համայնքների կանաչ եւ մաքուր ապագայի, ինչպես նաեւ Աստծո արարչագործության հանդեպ իրենց սիրո մի գեղեցիկ արտահայտություն են։

Մելիք Միքայելյանի բանաստեղծություններից

ՓՈՇՈՏ ԿԱՐՈՏ

Փոշոտ կարոտը ուսերիդ առած՝
Քայլում ես նեղ-նեղ արահետներով,
Ու քո անցյալը հետեւում թողած,
Գալիս ես ինձ մոտ պարզկա գիշերով։

Տաքուկ գրկում ես մարմինս հոգնած
Ու երգում սիրո մարող մեղեդին,
Քայլում ես ինձ հետ՝ վշտերով լցված,
Որ ընկեր դառնանք կարոտի ցավին։

Մեմ-մեկ լռում են աչքերդ օտար,
Երբ որ փնտրում եմ կյանքի բանալին,
Քայլում եմ ահա դեպի հորիզոն,
Գուցե հանդիպեմ բացվող դռների։

16.05.2018թ.

ՄԵՂՔԵՐՍ ՆԵՐԻՐ

Աստված խնդրում եմ մեղքերս ներիր
Տխրության ժամին եղել եմ սխալ,
Խավարը քողը գցել է վրաս
Հոգիս ուզում է քեզանով ցնծալ։

Խռովքի մեջ տանջվել եմ ահագին

Կորցնելով քո պատկերը լուսավոր,
Եվ ուզում եմ սիրտս ապրի քո կողքին
Որ ինձ չզգամ վշտահար ու մենավոր։

Կապուտակ է հոգուս երկինքը այսօր,
Ես գտել եմ ճանապարհը քո լույսի,
Եվ ապրում եմ քո սրտի մեջ զորավոր
Որ իմ սիրտը հավերժ քեզնով բաբախի։

21.07.2019թ.

ԻՄ ԾՆՆԴԱՎԱՅՐԸ

Իմ ծննդավա՛յր,դու փոքրիկ մի գյուղ ու շատ հարազատ,
Դու փոքրիկ դրախտ, քո գրկում եմ ես ապրել միշտ ազատ,
Սիրո հանգրվան Սիզավե՛տ աշխարհ, դու իմ աննմա՛ն
Դաշտերդ կանաչ,դու զմրո՛ւխտ երկիր,փոքրի՛կ Հայաստան։

Գովերգում եմ ես իմ գյուղը,ինձ հարազատ մի աշխարհ,
Իմ տողերը քեզ համար են,իմ աղոթքն է քեզ համար,
Քո դաշտերում միշտ կբուրեն ծաղիկները հոտավետ,
Ծննդավա՛յր իմ հարազատ,լուսե հեքիաթ Սիզավետ։

Դու երազանք ինձ համար եւ մի օջախ սրբազան,
Իմ հուշերի փոքրի՛կ գյուղ՝ երազներով մանկական,
Դու կմնաս միշտ կանգուն,կապրես դարեր անսասան,
Ծննդավա՛յր իմ փոքրիկ, իմ Սիզավե՛տ աննման։

22.05.2016թ.

Կենսագրական գծեր
Մելիք Վաչիկի Միքայելյան

Ծնվել եմ 1995թ. հունիսի 8-ին Շիրակի մարզի Սիզավետ գյուղում։ 2001-2012թթ. սովորել եւ ավարտել եմ Սիզավետի միջնակարգ դպրոցը։ 2012թ. ընդունվել եմ Միքայել Նալբանդյանի անվան Գյումրու պետական մանկավարժական ինստիտուտի (այժմ Շիրակի Մ.Նալբանդյանի անվան պետական համալսարան) պատմաբանասիրական ֆակուլտետի իրավագիտության բաժինը։ 2013-2015թթ. ծառայել եմ ՀՀ Զինված ՈՒԺերում։ 2015թ.-ից ուսումս շարունակել եւ 2019թ.-ին ավարտել եմ Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի սոցիալական գիտությունների եւ իրավունքի ֆակուլտետի իրավագիտություն բաժնում։ Այժմ սովորում եմ նույն համալսարանի իրավագիտության բաժնի մագիստրատուրայում։

Ստեղծագործել սկսել եմ տասը տարեկանից։ Բանաստեղծություններիս առաջին ժողովածուն տպագրվել է 2017թ-ին՝ «Արծաթ հայելի» խորագրով։ Մասնակցել եմ Արարատ Մկրտումյանի անվան ամենամյա մրցանակաբաշխությանը եւ տպագրվել «Կրակե ձայների խեցի» գրական օնթոլոգիայում։ Այժմ էլ շարունակում եմ ստեղծագործել, հետաքրքրված եմ նաեւ երգարվեստով, ունեմ ձայնագրված ոչ հեղինակային մեկ երգ։

Տե՛ր, Քեզ եմ վստահում իմ կյանքը
Հեղ.՝ Արգինե Պողոսյան

Աստված ամենակարեւորն է յուրաքանչյուրիս կյանքում, ամեն ինչ իմաստալից է Աստծո միջոցով։ Ինչպես Սուրբ կույս Մարիամը Գաբրիել հրեշտակի ավետման լուրին պատասխանեց. «Ահավասի՛կ ես մնում եմ Տիրոջ աղախինը, թող քո խօսքի համաձայն լինի ինձ», մենք եւս պիտի մտածենք եւ ասենք, որ թող Աստծո կամքը լինի հիմա, միշտ եւ հավիտյան։ Ամեն քրիստոնյա մեծ հավատ պիտի ունենա առ Աստված, իսկ եթե մեկը մի փոքրիկ մանանեխի հատիկի չափ հավատք ունենա, կարծում եմ, նա կարող է ունենալ երկնային արքայություն հասնելու հույս։ Իսկ հավատք եւ Աստծուն նվիրվածություն ունեցող ամեն մարդ կժառանգի Աստծո երկնային արքությունը, որն ամենաբաղձալին է ինձ համար։ Առ Աստված սերը պետք է հասցնել գերագույն աստիճանի։ Դրա համար մարդ պետք է լինի պայքարող, անհոգի չլինի, ունենա ես, որը օրինակելի է, քանի որ երկրի վրա մի բան հաստատ է. «Ինչ որ կցանես, այն էլ կհնձես»։ Մարդ պիտի Աստծո ներկայությունը սրտում, աղոթքը շուրթերին, հոգին զուլալ ապրի, իր կյանքը առաքինի ու հիշի, որ կյանքը իր եւ Աստծո ձեռքերում է եւ Աստծո հովանու տակ։ Պիտի Աստծուն դիմես, խնդրես սրտանց, չէ՞ որ Սուրբ գրքում գրված է՝ բախի՛ր եւ կբացվի քո առաջ։

Եթե խնդրենք Աստծուն ամենազգաստ արթնությամբ, հոգենորոգ զվարթությամբ, ապա նա կհեռացնի մեզանից մառախուղը չարի, մթության մեջ եղած բոլոր ծուղակները, սուտն ու կեղծիքը։ Սրբուհի Աստվածածնի եւ բոլոր Սրբերի բարեխոսությամբ կունենանք հանգիստ մեր հոգիներում, խաղաղություն մեր սրտերում եւ ամենուր։

Անճառելի փառքերի ամենօրհնյալ Թագավո՛ր, քեզ համար չկա անկարելի եւ անհնարին ոչինչ, Քո ողորմությունն եմ խնդրում՝ ինձ, հայրենի երկրիս եւ հարազատ գյուղիս համար։ Քոնն եմ ես եւ ուզում եմ մնա՛լ քոնը։

Սիզավետում քրիստոնեական ավանդույթները հիմնված են եղել դարեր ի վեր եւ դրանք չարունակական փոխանցվում են սերնդեսերունդ։ Գյուղի տարեցները մեծ ակնածանքով եւ հավատարիմ քրիստոնյային հատուկ սիրով եւ հոգատարությամբ փոխանցում են սերն ու հարգանքը Եկեղեցուն, գալիք սերունդներին։ Դարեր չարունակ կատարած անտրտունջ եւ հավատարիմ աշխատանքի շնորհիվ է, որ այս ժամանակահատվածում Սիզավետ գյուղում կա Եկեղեցի եւ Սուրբ Պատարագ հաճախող, քրիստոնեավայել կենցաղ, բարք ու վարք ունեցող գյուղի երիտասարդ սերունդ։ Նրանց կատարած աշխատանքի շնորհիվ է, որ երիտասարդ եւ ծաղկող սերունդը ոգեպես այնքան հարուստ է, կրթված եւ ամրակամ, որ չարունակում է իր նախնիների կատարած անգնահատելի գործը, գյուղում պահում է հավատքի ամրությունը արտաքին հարվածներից սեփական օրինակով եւ գործով։ ԱՄԵՆ։

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Աղոթքները եւ Սուրբ Պատարագը՝ Սուրբ Ամենափրկիչ եկեղեցում

Սիզավետի Սուրբ Ամենափրկիչ եկեղեցում ամեն շաբաթ՝ ժամը 10։00*-ին տեղի է ունենում Առավոտյան ժամերգություն, որից հետո՝* 11։00*-ին, մատուցվում է Սուրբ Պատարագ։*

Ըստ տոնական օրերի կամ աղոթական սովորությունների, տեղի են ունենում նաեւ այլ աղոթական եւ երիտասարդական ձեռնարկներ, որոնց մասին կարող եք իմանալ՝ ներկա լինելով Սուրբ Պատարագին, ինչպես նաեւ՝ ընթերցելով այս պարբերաթերթը։

Սպասում եմ բոլորիդ ***Վարդավառի*** *կամ* ***Պայծառակերպության*** *տոնական Սուրբ Պատարագին՝ հուլիսի* 18*-ին՝ տոնի նախորդ օրը, շաբաթ, ժամը* 11։00*-ին,*
իսկ հուլիսի 20*-ին՝ երկուշաբթի, ժամը* 10։00*-ին, օր մեռելոց Պատարագին, որ կմատուցվի ձեր ննջեցյալների համար։*

Այս համաճարակի օրերին, խնդրում եմ, եկեղեցի եկե՛ք՝ համապատասխան պաշտպանիչ միջոցներով։

Սպասում եմ բոլորիդ՝ միասնական աղոթքի։

Ձեզ հանձնում եմ Տիրամոր եւ Հիսուսի Սուրբ Սրտի բարեխոսությանը։

Աստված օրհնի՛ բոլորիդ ընտանիքները եւ պահի Իր հզոր աջի ներքո։

Տ. Հովսեփ

Թերթի հովանավորներ՝

Արհ. Տ. Ռաֆայել Արքեպս. Մինասյան՝ Առաջնորդ Կաթողիկէ Հայոց Հայաստանի, Վրաստանի, Ռուսաստանի, Ուկրաինայի եւ Արեւելյան Եվրոպայի

«Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպություն

Թերթը կազմեց՝ Տ. Հովսեփ Քհն. Գալստյան՝
Հոգեւոր հովիվ՝ Մեծ Սեպասար, Ղազանչի, Բավրա եւ Սիզավետ համայնքների
Հեռ.՝ 055698957

Տպագրության քանակ՝ 70, *տեսակը՝ սեւ ու սպիտակ, թուղթ՝* 80գր.

Գյումրի, Հայ Կաթողիկէ Առաջնորդարան, 2020թ.